



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**
 - 1.1 Բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված՝ հաշվետու տարում իրականացված աշխատանքները
 - 1.2 Բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դեպքերի քննությունները
 - 1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը
 - 1.3.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացում և ոլորտային կանոնագրերի մշակմանն աջակցություն
 - 1.3.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրերի կիրառում
 - 1.4 Անհամատեղելիության պահանջների պահպանումը
 - 1.4.1 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում
 - 1.4.2 Հավատարմագրային կառավարման ինստիտուտը
 - 1.4.3 Կարգավիճակով չպայմանավորված պաշտոնների զբաղեցումը
 - 1.4.4 Այլ վճարովի աշխատանքի իրականացումը
 - 1.4.5 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների հետևանքների անհատակությունը
 - 1.5 Շահերի բախման վերաբերյալ քննություններ
 - 1.6 Այլ սահմանափակումներ
 - 1.7 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը
 - 1.8 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում
 - 1.8.1 2024 թվականի ամփոփ վիճակագրություն
2. **ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ**
 - 2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում և հայտարարագրերի ներկայացման գործընթաց
 - 2.2 Աջակցություն հայտարարատուներին
3. **ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**
 - 3.1 Հայտարարագրերի վերլուծություն
 - 3.2 ԶԼՄ հրապարակումների, անձանց գրավոր դիմումների և կուսակցությունների տարեկան հաշվետվությունների հիման վրա ուսումնասիրություն
4. **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻ ԖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ**

- 4.1 [Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ](#)
- 4.2 [Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ](#)
- 4.3 [Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում](#)
 - 4.3.1 [Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների](#)
 - 4.3.2 [Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգում](#)
- 4.4 [Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում](#)
5. [ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ](#)
 - 5.1 [Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի ապահովմանն ուղղված աշխատանքները](#)
 - 5.2 [Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ](#)
 - 5.2.1 [Դատական համակարգում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ](#)
 - 5.2.2 [Դատախազության համակարգում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ](#)
 - 5.2.3 [Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ](#)
 - 5.2.4 [Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ](#)
6. [ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ](#)
7. [ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ](#)
8. [ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ](#)
 - 8.1 [Հակակոռուպցիոն կրթություն](#)
 - 8.2 [Հանրային իրազեկվածության բարձրացում, հաղորդակցություն](#)
9. [ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ](#)
 - 9.1 [Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ](#)
 - 9.2 [Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ](#)
 - 9.3 [Նվերների հաշվառման ռեեստր](#)
 - 9.4 [Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայք](#)
 - 9.5 [Կրթական էլեկտրոնային համակարգ](#)
- 10 [ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ](#)
- 11 [ԱՍՓՈՓՈՒՄ](#)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով կամ ԿԿՀ) ամփոփում է 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքները, որոնք ուղղված են

եղել հակակոռուպցիոն քաղաքականության կանխարգելիչ բաղադրիչի գործնականում ապահովմանը:

Հաղորդումը ներառում է Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղություններով գրանցած արդյունքները, վիճակագրական ցուցանիշները, ոլորտային մարտահրավերները, ինչպես նաև եզրահանգումների հիման վրա նախանշված ռազմավարական զարգացման հետագա ուղղությունները: Հաղորդման կառուցվածքն ուղղակիորեն բխում է Հանձնաժողովի գործառնությանն առաջնահերթություններից և հիմնական ուղղություններից:

Մասնավորապես, առանձին գլուխներով անդրադարձ է կատարվում՝

- հանրային ծառայության բարեվարքության համակարգի կայացմանն ու ամրապնդմանը,
- գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, հայտարարատուների համար գործընթացն առավել դյուրին դարձնելուն ուղղված միջոցառումներին,
- հայտարարագրերի վերլուծությանը,
- կուսակցության ֆինանսական վերահսկողության գործառնության գործնականում կիրառմանը և արձանագրած արդյունքներին,
- բարեվարքության ուսումնասիրության գործիքի միջոցով բարեվարքության տեսանկյունից ռիսկային անձանց մուտքը պետական համակարգ կանխելուն ուղղված քայլերին և այդ ուղղությամբ արձանագրված հիմնական միտումներին,
- կոռուպցիոն ռիսկերի գնահատման ինստիտուտի ներդրման առնչությամբ նախապատրաստական միջոցառումների իրականացմանը,
- հակակոռուպցիոն կրթության իրականացմանը և հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված քայլերին,
- Հանձնաժողովի մանդատի ամբողջական թվայնացման տեսլականին և այդ ուղղությամբ արձանագրած արդյունքներին,
- կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում միջազգայի համագործակցության կարևորությանը:

I. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1.1 Բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված՝ հաշվետու տարում իրականացված աշխատանքները

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելու լիազորությունը, ինչը պայմանավորել է Հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղությունները 2024 թվականին: Ի համեմատություն նախորդ տարիների՝ հաշվետու տարում էականորեն աճել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող՝ հանրային իշխանության մարմիններից և քաղաքացիներից ստացվող դիմումների, ինչպես նաև վերաբերելի մեղիա հրապարակումների, արդյունքում նաև՝ դրանց հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թիվը: Հանրային ծառայության բարեվարքության համակարգի կայացմանն են նպաստել նաև ոլորտում տեղի ունեցած մի շարք օրենսդրական փոփոխությունները, որոնցով ապահովվել է Հանձնաժողովի աշխատանքների՝ առավել թիրախային իրականացումը:

Բացի ուսումնասիրությունների թվի աճից, ինչի արդյունքում Հանձնաժողովը գործնականում հնարավորություն է ունեցել քննելու բարեվարքության համակարգի տարրերին առնչվող իրավախախտումները և իրավասու մարմիններին ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ, հաշվետու ժամանակահատվածում էական առաջընթաց է գրանցվել վարքագծի կանոնների կիրառման և նվերների ընդունման գործընթացի կանոնակարգման ոլորտներում: Այսպես՝

➤ 2024 թվականի ապրիլի 1-ին ուժի մեջ է մտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը՝ հնարավորություն տալով Հանձնաժողովին քննել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտումները:

➤ Գործնական կիրառություն են ստացել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման կարգերը, որոնք, պայմանավորված ոլորտային մի շարք օրենսդրական փոփոխություններով, վերանայվել և փոփոխվել են՝ նվերների ընդունման

սահմանափակումների ինստիտուտի ամբողջական գործարկումն ապահովելու նպատակով: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հնարավորություն են ունեցել իրականացնել իրենց կողմից ստացված նվերների հաշվառումը և պետությանը հանձնումը:

➤ Հանձնաժողովը 2024 թվականին շարունակել է վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում հանրային իշխանության մարմիններին աջակցության տրամադրումը, ոլորտային կանոնագրքերի դիտարկումը, առաջարկների ներկայացումը, ինչպես նաև կանոնագրքերի մշակմանն ուղղված քննարկումներին մասնակցությունը:

➤ Օրենսդրական խնդիրների գույքագրման համատեքստում, Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել է բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի խնդիրների գույքագրում, որը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին և հրապարակվել Հանձնաժողովի կայքէջում:

➤ Իրականացվել է մշտադիտարկում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում (ավելի քան 100 պաշտոնատար անձի)՝ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների պահպանման ստուգման նպատակով:

➤ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված գործողությունների շրջանակներում հստակեցվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման կառուցակարգերը, ինչի նպատակով Հանձնաժողովը Վիճակագրական կոմիտեի հետ համագործակցությամբ մշակել է վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույց, ներդրվել է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման գործիքակազմ, հավաքագրվել է 2024 թվականի՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտումներին առնչվող վիճակագրությունը:

➤ Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության համակարգին առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը:


➤ Զուգահեռաբար իրականացվել են բարեվարքության համակարգի և Հանձնաժողովի գործունեության ոլորտների վերաբերյալ վերապատրաստումները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

➤ Մեկնարկել են հակակոռուպցիոն կրթության էլեկտրոնային հարթակի կառուցման աշխատանքները և մշակվել են թվային առաջին դասընթացները, որոնք ներկայում արդեն հասանելի են հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց:

1.2 Բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դեպքերի քննությունները

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առանցքային գործառնություններից է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների պահպանմանը հետևելը և համապատասխան իրավախախտումներին առնչվող դեպքերը քննելը և լուծելը: Նշվածի համատեքստում 2024 թվականի ընթացքում բարեվարքության համակարգի տարրերի (անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարքագծի կանոններ, նվերների ընդունման սահմանափակումներ, այլ սահմանափակումներ) առնչությամբ դիմումների և մեղիա հրապարակումների հիման վրա Հանձնաժողովում իրականացվել է ընդհանուր թվով 120 ուսումնասիրություն, որից՝ 59-ը մեղիա հրապարակումների, 58-ը՝ դիմումների հիման վրա, ևս 3-ը՝ Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների շրջանակներում արձանագրված խախտումների հիման վրա: Նախորդ տարվա համեմատ՝ ուսումնասիրությունների ընդհանուր թիվն աճել է ավելի քան երկու անգամ՝ 54-ից հասնելով 120-ի:


2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նախորդ տարիների համեմատությամբ՝ էապես աճել է շահերի բախման դեպքերի վերաբերյալ Հանձնաժողով հասցեագրվող դիմումների, ինչպես նաև վերաբերելի մեղիա հրապարակումների թիվը: 2024 թվականին իրականացված՝ վերը նշված 120 ուսումնասիրություններից 51-ը վերաբերել են շահերի բախման իրավիճակներին, անհամատեղելիության պահանջների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների թիվը կազմել է 40, վարքագծի կանոնների վերաբերյալ ուսումնասիրությունները եղել են 19-ը, նվերների ընդունման սահմանափակումների և այլ սահմանափակումների վերաբերյալ՝ 10-ը:


Հաշվետու տարում շահերի բախմանն առնչվող դեպքերը գերակայել են նաև մեղիա դաշտում: Ուսումնասիրված հրապարակումներից 31-ը վերաբերել են շահերի բախման իրավիճակներին, 14-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 10-ը՝ վարքագծի կանոններին: Երեք դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է նվերների ընդունման սահմանափակումներին, իսկ մեկ դեպքում՝ այլ սահմանափակումներին:

Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ մեղիա հրապարակումների ուսումնասիրություններ



Ինչ վերաբերում է այլ գերատեսչություններից ստացված գրություններին և քաղաքացիներից ստացված դիմումներին՝ 23 դեպքում դրանք վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 20-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 9-ը՝ վարքագծի կանոններին, 4-ը՝ այլ սահմանափակումներին: Երկու դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է նվերների ընդունման սահմանափակումներին:

Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ դիմում-գրությունների ուսումնասիրություններ



1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

Վարքագծի կանոնների միասնական համակարգի ապահովմանն ուղղված Հանձնաժողովի գործունեությունը 2024 թվականի ընթացքում ներառել է հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների (այսուհետ՝ Տիպային կանոններ) տեղայնացմանը և ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակմանն աջակցություն,

2) Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) ենթադրյալ խախտումների դեպքերի քննություն:

1.3.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացում և ոլորտային կանոնագրքերի մշակմանն աջակցություն

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին են վերապահվել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելու գործառույթները:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը դեռևս 2022 թվականին հաստատել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ), իսկ 2023 թվականին՝ Տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը¹ և Հանրային

¹ Հասանելի՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/Int-Manual-to-Model-COC-of-Public-Servants_03.12.2024_final.pdf

ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը²:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված Տիպային կանոնները հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար: Հանրային ծառայության առանձին տեսակները դեկլարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Վերոգրյալի համատեքստում՝ 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է աջակցություն տրամադրել պետական մարմիններին ոլորտային կանոնագրքերի մշակման հարցում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը Տիպային կանոններին և Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցի պահանջներին:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը դիրքորոշում է ներկայացրել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ծառայողների և Ազգային անվտանգության մարմինների ծառայողների վարքագծի կանոնագրքերի նախագծերի վերաբերյալ: Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված նախագծերով հիմնականում պահպանվել են ոլորտային կանոնագրքերի մշակմանը ներկայացվող պահանջները, միաժամանակ, առաջարկել են առանձին շտկումներ՝ Տիպային կանոններին նախագծերով սահմանվող կանոնների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Որպես դրական զարգացում հարկ է նկատել, որ երկու նախագծի դեպքում էլ համապատասխան պետական մարմինները մեծամասամբ իրացրել են Հանձնաժողովի ներկայացրած առաջարկները:

Հանձնաժողովը ողջունում է այն հանգամանքը, որ Տիպային կանոններին համահունչ արդեն իսկ ընդունվել են մաքսային, հարկային, փրկարար, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում, հակակոռուպցիոն, հարկադիր կատարման ծառայողների վարքագծի կանոնները: Ընդունվել են նաև համայնքային ծառայողների վարքագծի կանոնները, որոնք, չնայած որոշ անհամապատասխանությունների, հիմնականում համահունչ են Տիպային կանոններին:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ Տիպային կանոնների ընդունումից գրեթե 2 տարի անց դեռևս չեն ընդունվել հանրային ծառայության մի շարք տեսակների ոլորտային կանոնագրքերը, իսկ մինչև Տիպային կանոնների ընդունումն առկա կանոնագրքերը ոչ բոլոր դեպքերում են համապատասխանեցվել Տիպային կանոններին, ինչը

² Հասանելի՝

<https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D5%88%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf>

խոչընդոտներ է ստեղծում հանրային ծառայության տարբեր տեսակներում վարքագծի կանոնների միասնական մեկնաբանման և կիրարկման տեսանկյունից:

Այսպես, դեռևս չեն ընդունվել ոստիկանության, էկոպարեկային, դատական կարգադրիչների, քրեակատարողական ծառայողների, ինչպես նաև համայնքային վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները: Բացի այդ՝ դիվանագետի էթիկայի կանոնները, քաղաքացիական ծառայողների, պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները էականորեն տարբերվում և, որոշ դեպքերում, անգամ հակասում են Տիպային կանոններին՝ ինչպես կառուցվածքի, այնպես էլ բովանդակության տեսանկյունից:

Խնդրահարույց է նաև, որ պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները, որոնք ընդունվել են 2024 թվականին, մշակման փուլում չեն ներկայացվել Հանձնաժողովի դիտարկմանը՝ ի հակասություն Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցի դրույթներին: Նման պայմաններում Հանձնաժողովը գրկված է եղել վարքագծի կանոնների միասնականությունն ապահովելու իր գործառույթն իրականացնելու հնարավորությունից:

Հարկ է նկատել, որ Տիպային կանոններին վարքագծի ոլորտային կանոնագրքերի համապատասխանեցման պահանջը նախ և առաջ վերաբերում է հանրային ծառայության առանձին տեսակներին, այդուհանդերձ, գործնականում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց որոշակի խմբերի պարագայում վարքականոնների անհամապատասխանությունները կամ Տիպային կանոններից էական շեղումները ևս բացասական գործոն են վարքագծի կանոնների կիրառման և մեկնաբանման միասնական պրակտիկայի տեսանկյունից:

Հանձնաժողովը խնդրահարույց է գնահատում նաև այն, որ որոշ պաշտոնների դեպքում օրենսդրությամբ առհասարակ բացակայում են վարքագծի կանոնների սահմանման լիազորող նորմեր: Հատկապես խնդրահարույց է համայնքների ավագանու անդամների և Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից երբևէ պատգամավորական էթիկայի կանոնների ենթադրյալ խախտումների կապակցությամբ էթիկայի հանձնաժողով չձևավորելու պրակտիկան:

Հանձնաժողովը, որպես բարեվարքության համակարգի միասնականությանը հետևելու մանդատով օժտված պետական մարմին, հատկապես մտահոգիչ է համարում նշված խնդիրներն այն տեսանկյունից, որ Ազգային ժողովի պատգամավորների, համայնքի ավագանու անդամների վարքագծի կանոնների բացակայության, միաժամանակ, գործնականում հենց այս պաշտոնատար անձանց կողմից հաճախ դրսևորվող ոչ էթիկական վարքագծի պայմաններում այս դաշտը վերահսկելիությունից դուրս է գալիս:

Մտահոգություններն առավել խորանում են այն պայմաններում, որ և Ազգային ժողովի, և ավագանու նիստերը հրապարակային են, և հաճախ քաղաքական խոսքի

թույլատրելի սահմաններից դուրս խոսելաժողով հանգեցնում է հանրային ծառայության վերաբերյալ բացասական ընկալման հանրության մոտ, մինչդեռ նման դեպքերը չեն արժանանում պատշաճ գնահատականի: Ավելին, նկատվում է միտում անպատժելիության պայմաններում վարքագծի և ընդհանուր բարեվարքության մշակույթի շարունակական վատթարացման:

Շատ դեպքերում վարքագծի կանոնադրքի սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձինք ուղղակի հարաբերվում են նշված խումբ անձանց հետ (պատգամավորներ, ավագանու անդամներ), և անհավասար պայմաններ են ստեղծվում վարքականոնի կարգավորման տեսանկյունից: Մասնավորապես, Հանձնաժողովը, Վարքագծի կանոնադրքի դրույթների ենթադրյալ խախտման համատեքստում դիտարկելով ավագանու անդամների կամ պատգամավորների հետ փոխհարաբերությունների շրջանակներում Վարքագծի կանոնադրքի սուբյեկտ հանդիսացող անձանց վարքագիծը, գրկված է ավագանու անդամների կամ պատգամավորների վարքագիծը քննարկելու կամ գնահատելու հնարավորությունից: Ավելին, ավագանու անդամների պարագայում անգամ առկա չէ վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումները քննելու իրավասու մարմին, որին Հանձնաժողովը նման դեպքերում կկարողանար դիմել: **Արդյունքում՝ համայնքի ղեկավարների, նրանց տեղակալների, կառավարության անդամների, ինքնավար կամ վարչական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը ստանում է համապատասխան գնահատական այն դեպքում, երբ ավագանու անդամների ու պատգամավորների նույնաբնույթ վարքագիծը չի դառնում քննության առարկա:**

Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 16-ի՝ Երևանի ավագանու նիստի շրջանակներում ավագանու անդամների կողմից հնչեցված խոսքի առնչությամբ գրություններ է հասցեագրել ավագանու խմբակցությունների ղեկավարներին՝ առաջարկելով քաղաքական բոլոր հարթակներում պահպանել բարեվարքության և հարգալիքության օրենսդրական սկզբունքները, ցուցաբերել զսպվածություն, չչարաշահել քաղաքական խոսքի սահմանները, ինչպես նաև հարգել այլոց հիմնարար իրավունքները՝ քաղաքացիների շրջանում չառաջացնելով անվստահություն և հանրային իշխանության, տվյալ դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնի հեղինակության նվազեցում: Երևանի ավագանու խմբակցությունների ղեկավարների կողմից Հանձնաժողովի գրությանը պատասխան չի ներկայացվել: Սա գործնական այն օրինակներից մեկն է, երբ ավագանու վարքագծի կանոնների բացակայության պայմաններում վերջիններիս կողմից դրսևորվող վարքագիծը որևէ քննության չի արժանանում՝ չնայած այդ վարքագծի՝ հանրային իշխանության հեղինակությունն արատավորող կամ այլ անձանց պատիվն ու արժանապատվությունն առերևույթ նվաստացնող բնույթին և հանրային ընկալման տեսանկյունից դրա հասցրած վնասին:

Հարկ է նշել, որ պատգամավորների վարքագծի կանոնների մշակման անհրաժեշտության վրա ուշադրություն է հրավիրել նաև Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի

դեմ պայքարի պետությունների խումբը (GRECO): Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի երկրորդ՝ միջանկյալ համապատասխանության զեկույցում արձանագրվել է պատգամավորների վարքագծի կանոնագիրք մշակելու և ընդունելու հրատապությունը: Սակայն, այդ պահանջը շարունակում է մնալ իրագործման փուլում:

Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի կանոնների անկատարության կամ դրանց բացակայության խնդրին անդրադարձել է նաև գնահատման այլ զեկույցներում: Այսպես, 2024 թվականի մարտի 22-ին ընդունված՝ 5-րդ գնահատման փուլի զեկույցով նշվել է, որ ոստիկանությունը չունի լավ մշակված էթիկայի ենթակառուցվածքներ՝ հաշվի առնելով նաև վարքագծի կանոնագրքի բացակայությունը: Ըստ այդմ, արձանագրվել է, որ հաշվի առնելով ոստիկանության ծառայողների դերի և գործառույթների առանձնահատկությունները, պետք է մշակվի նշված առանձնահատկությունները հաշվի առնող ոլորտային կանոնագիրք: Բացի այդ, գնահատման 4-րդ փուլի երկրորդ՝ միջանկյալ համապատասխանության զեկույցով GRECO-ն արձանագրել է պատգամավորների վարքագծի կանոնագիրք ընդունելու անհրաժեշտությունը, որը մի քանի տարի է՝ գտնվում է մշակման փուլում:

Վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և դրանց կիրարկման միասնականության ապահովման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, որի գործողությունների ծրագրով նախատեսվել են դատավորների և դատախազների գործող վարքագծի կանոնների համապատասխանեցումը Տիպային կանոններին, համայնքի ավագանու, վարչական շրջանի ղեկավարների և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանումը, հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի սահմանումը: Թեև որպես նշված գործողությունների կատարման վերջնաժամկետ նախատեսվել է 2024 թվականի երկրորդ կիսամյակը, այնուամենայնիվ, հաշվետու տարվա ընթացքում դրանք չեն կատարվել:

Այսպես, 2024 թվականի նոյեմբերին Արդարադատության նախարարությունը քննարկման է ներկայացրել ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի և հարակից օրենքների նախագծի փաթեթը, որում ներառված է նաև ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագծով, ի թիվս այլնի, առաջարկվում է նախատեսել համայնքների ավագանիների լիազորությունը՝ սահմանելու համայնքի ավագանու անդամի վարքագծի կանոնները:

Վերոնշյալ նախագծի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ Հանձնաժողովը, ի թիվս այլնի, առաջարկել է վերանայել ավագանու անդամների վարքագծի կանոնների սահմանման հարցը՝ նախատեսելով դրանց սահմանումը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, ինչը թույլ կտա խուսափել առանձին

համայնքներում տարբերակված կամ միմյանց հակասող նորմեր բովանդակող կանոնադրքերի ընդունումից:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև սահմանել Վարքագծի կանոնադրքի կիրառելիությունը համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչը, Հանձնաժողովի գնահատմամբ, ողջունելի է:

Հարկ է նկատել նաև, որ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնների հաստատումը նախատեսվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագրով, որով նշված գործողության կատարման վերջնաժամկետ է նախատեսվել 2025 թվականի երկրորդ կիսամյակը:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է՝

- ընդունել Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները և ապահովել դրանց կիրառման ամբողջական դաշտը՝ այդ թվում էթիկայի հանձնաժողովի ձևավորմանն և գործունեության համապարփակ կանոնակարգումները,
- կատարել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ համայնքի ավագանու անդամների վարքագծի կանոնները հաստատելու լիազորությունը (կամ առնվազն տիպային կանոնների նախատեսումը),
- ընդունել ոստիկանության, էկոպարեկային, դատական կարգադրիչների, քրեակատարողական ծառայողների վարքագծի կանոնադրքեր՝ ոլորտային առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչպես նաև օրենսդրական հիմքեր ստեղծել համայնքային վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ Վարքագծի կանոնադրքի կիրառման համար,
- դիվանագիտական ծառայողների, քաղաքացիական ծառայողների և պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները համապատասխանեցնել Տիպային կանոններին՝ Հանձնաժողովի հետ խորհրդակցությունների միջոցով:

1.3.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնադրքի կիրառում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված են Վարքագծի կանոնագիրքն ընդունելու և դրանով նախատեսված վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների դեպքերը քննելու լիազորությունները:


Ըստ այդմ՝ Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Վարքագծի կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից: Կանոնագիրքը

հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական [կայքէջում](#)՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական [arlis](#) համակարգում:

Կանոնագրքի, դրանով սահմանվող նորմերի, ինչպես նաև կիրառման և հետևանքների մասին իրազեկվածության բարձրացումը կարևորելով՝ Հանձնաժողովը նախքան Կանոնագրքի ուժի մեջ մտնելը, ապա նաև դրա կիրառման ընթացքում Կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանում իրականացրել է իրազեկման աշխատանքներ: Մասնավորապես, Կանոնագրքի էլեկտրոնային և տպագիր տարբերակները, ինչպես նաև վարքագծի կանոնների բովանդակությունը բացահայտող տեղեկատվական նյութերը ներկայացվել են պետական մարմիններին:

Հաշվետու տարում Հանձնաժողովն իրականացրել է վարքագծի կանոնների խախտմանը վերաբերելի 19 ուսումնասիրություն, որից 10-ը՝ մեղիա հրապարակման, 9-ը՝ դիմումի հիման վրա, որոնցից մեկը վերաբերել է ոչ թե որոշակի պաշտոնատար անձի նկատմամբ վարույթի հարուցմանը, այլ պարունակել է հարցում՝ դիմումով նկարագրված իրավիճակի վերաբերյալ:

Վարքագծի կանոնագրքի ուժի մեջ մտնելուց հետո արդեն իսկ նկատելի է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թվի աճ: Այսպես, 2022 թվականին վարքագծի կանոնների վերաբերյալ ստացվել է 3 դիմում, 2023 թվականին նման դիմումներ չեն ստացվել, իսկ արդեն 2024 թվականին դրանց թիվը կազմել է 9:



Ուսումնասիրությունների արդյունքներով հաշվետու ժամանակաշրջանում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ 5 վարույթ: Մեկ դեպքում

Հանձնաժողովը որոշում է կայացրել նախաձեռնել վարույթ, որը, սակայն, հարուցվել է 2025 թվականին: 11 դեպքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ բացակայում են վարույթի հարուցման հիմքերը, որոնցից 4 դեպքում՝ պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ, 4 դեպքում՝ ելնելով այն հանգամանքից, որ դիմումը վերաբերել է Վարքագծի կանոնագրքի սուբյեկտ չհանդիսացող պաշտոնատար անձի և 3 դեպքում՝ նկատի ունենալով, որ դիմումը ներկայացվել է մինչև Վարքագծի կանոնագրքի՝ ուժի մեջ մտնելը:

Հարուցված վարույթներից 1-ը վերաբերել է պետական քաղաքական և վարչական պաշտոն զբաղեցնող անձի (ՆԳ նախարարի տեղակալ-նստիկանության պետի), մեկը՝ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի (պատգամավորի օգնականի), իսկ 3-ը՝ համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց (համայնքի ղեկավարների և համայնքի ղեկավարի տեղակալի):

Հարուցված 5 վարույթներից 3-ը կասեցվել են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նույն դեպքի վերաբերյալ նախաձեռնվել է քրեական վարույթ: 2024 թվականին ավարտվել է 2 վարույթ, որոնց արդյունքներով Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման վերաբերյալ 2 եզրակացություն՝ Երևանի քաղաքապետի և ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալի-նստիկանապետի վերաբերյալ:

Երկու վարույթի արդյունքում էլ արձանագրվել է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի խախտում, որոնք վերաբերում են բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականություններին: Ընդ որում՝ երկու վարույթով էլ արձանագրված խախտումը վերաբերել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից զսպվածություն ցուցաբերելու պահանջը չկատարելուն և անձանց արժանապատվությունը վիրավորելուն, մի դեպքում՝ ավագանու անդամի, մյուս դեպքում՝ հավաքի մասնակիցների:

Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման վերաբերյալ Երևանի քաղաքապետը հանդես է եկել հայտարարությամբ³, հրապարակելով այն Երևանի քաղաքապետարանի կայքէջում: Մյուս դեպքում՝ Ներքին գործերի նախարարի տեղակալը վիճարկել է Հանձնաժողովի եզրակացությունը դատական կարգով, որը մասնակի բավարարվել է. դատական ակտը բողոքարկվել է Հանձնաժողովի կողմից:

Նշված վարույթների և Վարքագծի կանոնագրքի ենթադրյալ խախտումների կապակցությամբ ուսումնասիրությունների իրականացման շրջանակներում արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

1. Խախտում արձանագրելու դեպքում ներկայացվող պարզաբանման բովանդակության անհստակությունը՝

³ Հասանելի՝ <https://www.yerevan.am/hy/news/tigran-avinyani-orakowmnere-orewe-meki-andze-viravorelow-mitowm-ch-en-ownets-el/>

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնելու հրապարակային պարզաբանում:

Այնուամենայնիվ, չի մանրամասնվում, թե ինչ պետք է բովանդակի հրապարակային պարզաբանումը, արդյոք հանրային պաշտոն զբաղեցնող անձը կրում է պարզաբանմամբ խախտում կատարելու հանգամանքն ընդունելու պարտականություն, թե ոչ և այլն: Արդյունքում, գործնականում առաջանում է մի իրավիճակ, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց պարզաբանմամբ կարող են հերքել խախտման առկայությունը այն դեպքում, երբ խախտման առկայությունը օրենքով սահմանված ընթացակարգով հաստատվել է Հանձնաժողովի կողմից:

Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց օրենսդրական պարտականությունը՝ վարքագծի կանոնի խախտումը հաստատվելու դեպքում ներկայացնելու հրապարակային պարզաբանում, նպատակ ունի ապահովելու հանրության առջև խախտում կատարած պաշտոնատար անձի հաշվետվողականությունը: Ուստի, այս նպատակի ամբողջական իրացումը հնարավոր չէ այն դեպքերում, երբ խախտում գործած պաշտոնյան կասկածի տակ է դնում օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հաստատված փաստը՝ խախտման առկայությունը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության առնչությամբ հրապարակային պարզաբանման բովանդակությանն ուղղված պահանջ՝ նախատեսելով, որ պարզաբանմամբ խախտում թույլ տված անձն անդրադառնա խախտման կատարման պատճառներին, պարզաբանի դրա կատարման հանգամանքները:

2. Հանրային իշխանության մարմինների ներքին կարգապահական կանոններով էթիկական բնույթի նորմերի սահմանումը՝

«Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողի հիմնական պարտականությունների թվում է ինչպես հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանցից բխող վարքագծի կանոններին առնչվող կարգավորումներին հետևելը, այնպես էլ օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը:

Հարկ է նկատել, որ վարքագծի կանոնները և աշխատանքային կարգապահական ներքին կանոնները տարբեր նպատակներ ունեցող իրավանորմեր են, որոնք չեն կարող նույնանալ: Մասնավորապես, վարքագծի կանոնների նպատակը հանրային ծառայողների բարեվարքության ապահովումն է, իսկ կարգապահական կանոնների նպատակը՝ հանրային ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը և աշխատավայրում կարգապահությունը ապահովելն է:

Այնուամենայնիվ, հանրային ծառայության մի շարք տեսակների և որոշ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ներքին կարգապահական կանոնները ներառում են էթիկական բնույթի նորմեր, որոնք պետք է սահմանվեն բացառապես վարքագծի կանոններով: Նման տարանջատումը հատկապես կարևոր է՝ նկատի ունենալով, որ վարքագծի կանոնների խախտումները պետք է քննվեն «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան ձևավորված էթիկայի հանձնաժողովների կողմից, իսկ կարգապահական կանոնների խախտումները՝ ծառայողական քննության կամ կարգապահական վարույթի շրջանակներում:

Այս խնդիրն առկա է, օրինակ, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների, ՀՀ ՆԳՆ փրկարարական ծառայողների, քրեակատարողական ծառայողների պարագայում:

Ըստ այդմ, անհրաժեշտ է վերանայել հանրային իշխանության բոլոր մարմինների ներքին կարգապահական կանոնները՝ համոզվելու համար, որ դրանք չեն պարունակում վարքագծի կանոնների հետ նույնացող կամ իրենց բնույթով էթիկական կանոններ: Այդ թվում՝ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներքին կարգապահական կանոններում՝ բացառելով դրանցում էթիկական բնույթի կանոնները:

3. Պաշտոնների երկակի կարգավիճակը՝

«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվում է հանրային պաշտոնների դասակարգումը: Օրենքի իմաստով՝ հանրային պաշտոնները դասակարգվում են չորս հիմնական ենթախմբերի՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Միաժամանակ, հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող ոլորտային օրենսդրությամբ որոշ պաշտոններ ձեռք են բերում երկակի կարգավիճակ՝ միաժամանակ համարվելով ծառայության բարձագույն պաշտոններ (օր.՝ զինվորական ծառայության):

Վերոգրյալ օրենսդրական կարգավորումների արդյունքում անձի նկատմամբ միաժամանակ կիրառելի են լինում ինչպես Վարքագծի կանոնագրքի դրույթները, որոնցով վարույթն իրականացնում է Հանձնաժողովը, այնպես էլ ծառայության տվյալ տեսակի համար սահմանված ոլորտային կանոնները, որոնց ենթադրյալ խախտման վերաբերյալ ծառայողական քննություններն իրականացնում են իրավասու մարմինները: Նշված օրենսդրական կարգավորումները վարքագծի կանոնների մեկնաբանման և կիրառման տեսանկյունից չեն նպաստում միասնական դաշտի ձևավորմանը և գործնականում կարող են խնդրահարույց լինել թե՛ խախտման արձանագրման, թե՛ հետագա պատասխանատվության տեսանկյունից:

Ըստ այդմ, անհրաժեշտ է երկակի կարգավիճակով բոլոր պաշտոնների դեպքում նախատեսել, որ վարքագծի կանոնների խախտման դեպքերի քննությունն իրականացնում է

միայն Հանձնաժողովը և ոչ թե համապատասխան մարմնի կարգապահական կամ էթիկայի հանձնաժողովը:

4. Վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի իրականացման ընթացակարգային խնդիրներ՝

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով նախատեսվում են վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի հարուցման հետևյալ հիմքերը՝ անձի դիմում, լրատվամիջոցների հրապարակումներ, Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ իր լիազորությունների իրականացման ընթացքում առերևույթ խախտում հայտնաբերելու դեպքում, մինչդեռ սահմանվում է նշված հիմքերից միայն մեկի՝ դիմումների հիման վրա վարույթի հարուցման ժամկետ: Մասնավորապես, նախատեսվում է դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու կամ վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելու հնգօրյա ժամկետ: Նշված ժամկետը որոշ դեպքերում խիստ սեղմ է Հանձնաժողովի աշխատակազմի կողմից համապարփակ ուսումնասիրություն իրականացնելու և Հանձնաժողովի կողմից դրա արդյունքները քննարկելու համար: Արդյունքում, Հանձնաժողովը զրկված է նախքան բվարույթի հարուցումը համապատասխան հարցումներ կատարելու կամ առերևույթ խախտման առկայությունը պարզելու նպատակով անհրաժեշտ այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից, քանի որ դրանց կատարումն իրատեսական չէ հնգօրյա ժամկետում: Ավելին, հաշվի առնելով Հանձնաժողովի կոլեգիալ բնույթը և այն հանգամանքը, որ Հանձնաժողովի որոշումները կայացվում են նիստերի միջոցով, էլ ավելի խնդրահարույց է դառնում նշված ժամկետում համապարփակ քննարկման իրականացումը:

Հարկ է նկատել նաև, որ հստակ չեն «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված՝ վարույթի հարուցման կամ հարուցումը մերժելու ժամկետները՝ դիմումը վերադարձնելու պարագայում:

Ընթացակարգային մյուս խնդիրը վերաբերում է վարույթի հարուցումը մերժելու հիմքերի անկատարությանը: Մասնավորապես, չեն կարգավորվել այն դեպքերը, երբ ներկայացված դիմումով բարձրացված հարցերի ու ներկայացված նույնական փաստական հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովն արդեն իսկ հարուցել և դիմումի ստացման պահին իրականացնում է վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթ:

Հարկ է նկատել, որ նույնական խնդիրներ առկա են նաև անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, և շահերի բախման վերաբերյալ վարույթների դեպքում:

Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

➤ սահմանել Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումի հիման վրա մինչև վարույթի հարուցումը նախնական ուսումնասիրություն իրականացնելու հնարավորություն կամ վարույթ հարուցելու/վարույթի

հարուցումը մերժելու օրենսդրական ավելի երկար ժամկետներ՝ այդ ուսումնասիրությունները հնարավոր դարձնելու նպատակով,

➤ սահմանել դիմումը Հանձնաժողովի կողմից վերադարձնելու դեպքում կրկին ներկայացնելուց հետո վարույթի հարուցման և հարուցումը մերժելու հստակ ժամկետներ,

➤ նախատեսել խախտման նույն դեպքի վերաբերյալ ընթացիկ փուլում գտնվող վարույթի առկայությունը՝ որպես նոր վարույթի հարուցումը մերժելու հիմք:

5. Վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում կայացված եզրակացության բողոքարկման ընթացակարգի հետ կապված խնդիրները՝

Հանձնաժողովի եզրակացությունները կարող են բողոքարկվել Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում: Վարչական դատավարության օրենսգրքի 222.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բողոքարկման արդյունքում վարչական դատարանի կայացրած դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի հաստատած փաստերի փոխարեն նոր փաստեր հաստատելու մասին դատարանի որոշումը հիմք է Հանձնաժողովի կողմից եզրակացությունը վերանայելու համար:

Այս կարգավորումը խնդրահարույց է այն դեպքերում, երբ վարչական դատարանը անցել է նշված գործերի քննության սահմաններից և որպես նոր փաստեր հաստատել է Հանձնաժողովի իրավական գնահատականի արդյունքում կատարված եզրահանգումները, որոնք չեն կարող համարվել փաստեր: Նման դեպքերում Հանձնաժողովը զրկված է դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից և ստիպված է դատական ակտի հիման վրա կայացնել նոր եզրակացություն:

Հարկ է ընդգծել, որ խնդիրը վերաբերելի է նաև անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման վերաբերյալ և վերանայման վարույթների արդյունքում ընդունված եզրակացությունների բողոքարկմանը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է նախատեսել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ և վերանայման վարույթների արդյունքում ընդունված եզրակացության վերաբերյալ վարչական դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն այն դեպքում, երբ դատարանն անցել է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատական վերանայման սահմանները:

6. Քաղաքական գսպվածություն դրսևորելու սահմանադրական պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց լիազորությունների դադարեցման հետ կապված ընթացակարգի թերի կարգավորումը՝

Սահմանադրությամբ նախատեսվում են անկախ մարմինների անդամների և Մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունը՝ լիազորությունների իրականացման ընթացքում չլինելու որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվելու քաղաքական գործունեությամբ, ինչպես նաև հրապարակային ելույթներում ցուցաբերելու քաղաքական զսպվածություն:

Նշված պարտականությունն արտացոլվել է նաև Վարքագծի կանոնագրքում, ուստի Հանձնաժողովը նշված սահմանադրական պահանջի պահպանման հարցը քննարկում է վարքագծի կանոնների խախտման համատեքստում:

Այնուամենայնիվ, Օրենսդրությամբ, հստակ կերպով նախատեսված չէ այս դեպքերում վարքագծի կանոնի խախտման առկայության մասին եզրակացությունը պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու իրավասություն ունեցող մարմնին Հանձնաժողովի կողմից ներկայացնելու ընթացակարգը՝ ի տարբերություն անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունների:

Այս իմաստով՝ հարկ է նշել, որ Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 21-ին գրություն է հասցեագրել Ազգային ժողով՝ ներկայացնելով օրենսդրական ընթացակարգի բացակայության վերոնշյալ խնդիրը և հայցելով օրենսդրի դիրքորոշումը՝ անկախ պետական մարմնի անդամի կողմից Սահմանադրությամբ և ոլորտային օրենքով ներկայացվող քաղաքական զսպվածության դրսևորման պահանջի խախտման հիմքով Ազգային ժողով Հանձնաժողովի կողմից համապատասխան միջնորդություն ներկայացնելու հարցի առնչությամբ: Հանձնաժողովի գրությունը թողնվել է անպատասխան:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է նախատեսել քաղաքական զսպվածություն դրսևորելու սահմանադրական պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից նշված պարտականության խախտումը հաստատող՝ Հանձնաժողովի եզրակացությունը Ազգային ժողովին ներկայացնելու ընթացակարգ ու ժամկետներ՝ լիազորությունների դադարեցման հարցը խորհրդարանի կողմից քննարկելու նպատակով:


1.4 Անհամատեղելիության պահանջների պահպանումը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելու լիազորությունը: Միաժամանակ, Հանձնաժողովն օժտված է անհամատեղելիության պահանջների մեկնաբանման և դրանց կիրառման միասնականությունն ապահովելու լիազորությամբ: Հանձնաժողովն իր այս լիազորություններն իրացնում է դիմումների և հրապարակումների քննության, իր կողմից իրականացվող մշտադիտարկումների, ինչպես նաև հանրային իշխանության մարմիններին

և հանրային ծառայողներին խորհրդատվություն տրամադրելու միջոցով: Ստացված խորհրդատվությունների և պարզաբանումներ արդյունքում էականորեն բարելավվել է հանրային իշխանության այլ մարմինների պրակտիկան՝ կապված հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների խախտումների բացահայտման և կանխարգելման, ինչպես նաև դրանց քննությունների հետ: Ընդ որում՝ հաշվետու տարում ավելացել է անհամատեղելիության պահանջների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրամադրված խորհրդատվությունների թիվը:

2024 թվականին Հանձնաժողովն իրականացրել է անհամատեղելիության պահանջների վերաբերյալ 40 ուսումնասիրություն՝ 14-ը մեղիա հրապարակումների, 23-ը՝ դիմումների, և 3-ը՝ Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների շրջանակներում ի հայտ եկած խախտումների հիման վրա: Ընդհանուր առմամբ՝ նախորդող տարիների համեմատությամբ անհամատեղելիության պահանջներին առնչվող ուսումնասիրությունների հանրագումարային թիվն էապես չի փոփոխվել, այդուհանդերձ, որոշակիորեն ավելացել է վերաբերելի մեղիա հրապարակումների թիվը:

Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ



1.4.1 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների

պահպանմանը:

Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել է տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում:

Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից հաստատված պլանի համաձայն, որը հրապարակվել է 2024 թվականի հունիսի 5-ին՝ <http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/05/1/>:

Ուսումնասիրության սուբյեկտ են սահմանվել ՀՀ խոշորացված համայնքների ղեկավարները, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզպետները և նրանց տեղակալները՝ ընդհանուր թվով 105 պաշտոնատար անձ:

Մշտադիտարկումը նպատակ է հետապնդել ուսումնասիրության և տվյալների համադրման միջոցով դուրս բերել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում առկա անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել դրանց հնարավոր պատճառները և, որպես վերջնական պատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ նվազեցնելու խախտումների քանակը, ինչպես նաև իրազեկման և վերապատրաստումների միջոցով հնարավորին կառավարելի դարձնելու անհամատեղելիության պահանջների պահպանմանն առնչվող խնդիրները:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նշված անձանց՝ առևտրային արժեթղթերի տիրապետման, այլ աղբյուրից վարձատրության ստացման, առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացվածություն ունենալու կամ այլ եղանակով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, կարգավիճակով չպայմանավորված պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ տվյալները: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2024 թվականի մշտադիտարկմամբ ընդլայնվել է ուսումնասիրությունների շրջանակը. բացի անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգմանը՝ ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների՝ պետական և համայնային գնումների գործընթացներին մասնակցությունը և շահերի բախման կարգավորումների հնարավոր խախտման դեպքերը:

Արդյունքում արձանագրվել է, որ՝

- 105 պաշտոնատար անձից 40-ի (կամ 38 տոկոսի) հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ (ունեն գործող առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացված են դրանց կառավարման մարմիններում, կամ հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր),

- 9 դեպքում արձանագրվել է, որ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները կամ փոխկապակցված անհատ ձեռնարկատերերը մասնակցել են համայնքային գնումների գործընթացների, ընդ որում **7 դեպքում՝** նույն այն համայնքում, որտեղ փոխկապակցված անձինք զբաղեցրել են համայնքի ղեկավարի պաշտոնը, մյուս երկու դեպքում՝ պատվիրատու հանդիսացել են այլ համայնքներ:
- Փոխկապակցված անձանց մասնակցությամբ կամ վերջիններիս կողմից ղեկավարվող ընկերությունների մեծամասնությունը թեև հիմնադրվել է տարբեր ժամանակահատվածներում և հիմնականում՝ նախքան Մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից պաշտոնի ստանձնումը, այնուամենայնիվ, նշված անձինք պետական և համայնքային գնումներին առավել ակտիվ մասնակցություն են ցուցաբերել փոխկապակցված անձանց պաշտոնավարման ընթացքում: Ընդ որում, որոշ ընկերություններ հիմնադրվել են ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից՝ նախքան պաշտոնի ստանձնումը, իսկ պաշտոնի ստանձնումից հետո՝ դրանցում վերջիններիս բաժնեմասերն օտարվել են ընտանիքի անդամներին, ովքեր հետագայում մասնակցել են համապատասխան համայնքներում հայտարարված գնման գործընթացների:
- Պաշտոնատար անձանց կողմից շահերի բախման իրավիճակներում կնքված պայմանագրերի առարկան հիմնականում վերաբերել է շինարարական աշխատանքների, վառելիքի, այդ թվում՝ բնական գազի ձեռքբերման, ավտոմեքենաների տեխսպասարկման և ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման բնագավառներին:
- Հանձնաժողովը մշտադիտարկման արդյունքում շահերի բախման իրավական կարգավորումների խախտման՝ մասնավորապես՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցել է թվով **3 վարչական վարույթ՝ ՎԻՎ/81/2025, ՎԻՎ/15/2025 և ՎԻՎ/83/2025**, որոնց արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել է վարչական տույժ: Նշված 3 դեպքերում Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձինք, որպես պատվիրատուի ղեկավար, համայնքային կարիքների համար պատվիրված գնման գործընթացների արդյունքում պայմանագրեր են կնքել իրենց փոխկապակցված անձանց կամ նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ:

Պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերի և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

- 105 պաշտոնատար անձանցից 54-ը (կամ 51.4 %-ը) երբևէ չի ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային կազմակերպություններում:
- 105 պաշտոնատար անձանցից 51-ը (կամ 46.6%-ը) տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել առևտրային կազմակերպություններում կամ հաշվառված են եղել որպես անհատ ձեռնարկատեր:

- 33 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանց կողմից նախքան պաշտոնի ստանձնումը կազմակերպության մասնակցությունը կամ ներկայացվածությունը, ինչպես նաև ԱԶ-ի գործունեությունը դադարեցվել են:

- Բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ առևտրային կազմակերպությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, Հանձնաժողովը դրանց գործունեության դադարեցման հիմքերի և ժամկետների վերաբերյալ տեղեկություններ է հայցել իրավասու մարմիններից: Առանձին դեպքերում տեղեկատվություն է հայցվել նաև ԱԶ-ների և առևտրային կազմակերպությունների՝ փաստացի իրացման շրջանառության առկայության վերաբերյալ: Նշվածի համատեքստում հարցումներ են կատարվել ՊԵԿ՝ 8 անհատ ձեռնարկատիրոջ և 6 առևտրային կազմակերպության վերաբերյալ: Ստացված տվյալների գնահատմամբ արձանագրվել է, որ 6 առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարեցված է եղել մինչև պաշտոնատար անձանց կողմից պաշտոնի ստանձնումը, իսկ ԱԶ-ների դեպքում («գործող» կարգավիճակ ունեցող)՝ բացակայել է իրացման շրջանառությունը:

- Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հարցումներ են կատարվել նաև մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձանց:

- Պաշտոնատար անձանցից մեկը պաշտոնավարման ընթացքում ունեցել է գործող առևտրային կազմակերպություններում բաժնեմասնակցություն: Վերջինիս բաժնեմասն օրենքի պահանջների համապատասխան հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: 1 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձի բաժնեմասը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման օրենքի պահանջների խախտմամբ (հավատարմագրային կառավարիչ է հանդիսացել ֆիզիկական անձը):

- Մշտադիտարկման արդյունքում անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում է արձանագրվել երեք անձի մոտ, մի դեպքում՝ գործող առևտրային կազմակերպության բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու, մյուս դեպքում՝ հավատարմագրային կառավարման պահանջների խախտմամբ հանձնելու, և վերջին դեպքում՝ պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպության ներկայացուցչական գործառույթներին ներգրավվածության հիմքով:

Մշտադիտարկման շրջանակներում, ի թիվս անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների, արձանագրվել են պաշտոնատար անձանց կողմից, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների կողմից հայտարարագրմանը ներկայացվող պահանջների խախտումներ, մասնավորապես՝ հայտարարագրման ենթակա տվյալների չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման, որոշ դեպքերում՝ հայտարարագրերի չներկայացման դրսևորումներով: Հանձնաժողովի կողմից ընդհանուր՝ 42 անձանց նկատմամբ (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամներ) իրականացված գործընթացների

արդյունքում՝ 20 դեպքով հարուցվել է վարչական վարույթ, 9 դեպքով որոշվել է ավարտել ուսումնասիրությունը և առաջարկել հայտարարագրի ուղղում:

2024 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքներն ամբողջությամբ հասանելի են հետևյալ հղումով՝ <https://cpcarmenia.am/news/handznazhoghovn-ampopel-e-2024-tvakani-anhamategheliutyanyan-pahanjneri-pahpanman-mshtaditarkman-ardyunqneri/>:

Մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում սահմանված պաշտոններում ներկայում պաշտոնավարող անձանց շուրջ կեսը նախքան պաշտոնների ստանձնումը որևէ եղանակով ներգրավված է եղել ձեռնարկատիրական գործունեության մեջ, իսկ այն դեպքերում, երբ վերջիններս տիրապետել են առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնաբաժնի, պաշտոնի ստանձնմամբ պայմանավորված իրենց բաժնեմասերն օտարել են ընտանիքի անդամներին: Առանձին դեպքերում արձանագրվել է, որ նշված ընկերությունները մասնակցում են համայնքային գնման գործընթացների, ընդ որում՝ նաև այն համայնքներում, որտեղ անձը զբաղեցնում է համայնքի ղեկավարի պաշտոնը (այսինքն՝ հանդիսանում է պատվիրատուի ղեկավար): Չնայած՝ նշված դեպքերում վարչական վարույթի շրջանակներում քննության են առնվել միայն 2024 թվականի ընթացքում կնքված պայմանագրերը, նշված ընկերությունները համայնքային գնումների գործընթացների արդյունքում համայնքապետարանների հետ պայմանագրեր են կնքել նաև նախորդող տարիներին:

Նշված արձանագրումները վկայում են, որ չնայած պաշտոնատար անձինք պաշտոնի ստանձնումից հետո ֆորմալ առումով պահպանել են իրենց ներկայացվող անհամատեղելիության պահանջները՝ առկա են ռիսկեր՝ ընտանիքի անդամների մասնակցությամբ կամ վերջիններիս կողմից փաստացի ղեկավարվող ընկերությունների գործունեության նկատմամբ պաշտոնատար անձանց ազդեցության պահպանման տեսանկյունից:

1.4.2 Հավատարմագրային կառավարման ինստիտուտը

Առևտրային կազմակերպություններում բաժնեմասերի նկատմամբ պետական պաշտոնյաների սեփականության իրավունքի կարգավորումը թափանցիկության ապահովման, շահերի բախման կանխարգելման և հանրային վստահության պահպանման կարևորագույն գործառույթ է: Հավատարմագրային կառավարման ինստիտուտը նախորդ տարիներին ենթարկվել է էական փոփոխությունների և փոխարկումների: «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ 2023 թվականին ուժի մեջ մտած փոփոխություններով վերանայվել են հավատարմագրային կառավարման կարգավորումները՝ բացառելով առևտրային կազմակերպության բաժնեմասը ֆիզիկական անձանց կառավարմանը, ինչպես նաև պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձի կառավարմանը հանձնելու

հնարավորությունը: Օրենսդրական փոփոխություններով զուգահեռաբար արձանագրվել է, որ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները: Նշված կարգավորումներն իրենց հերթին հստակեցվել են 2024 թվականին: Այժմ, առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ ներկայում կարող են լինել՝

1) սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որպես ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անհատ ձեռնարկատերերը կամ առևտրային կազմակերպությունները.

2) բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

Այդուհանդերձ, չնայած իրավական հստակեցումներին, անհամատեղելիության պահանջները սահմանող հոդվածի իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը չի վերանայվել. ներկայիս կարգավորումներով՝ այն ներառում է պաշտոն զբաղեցնող անձի ամուսնուն, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակին, ծնողին, քրոջը և եղբորը: Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ընտանիքի անդամների կողմից հիմնադրած առևտրային կազմակերպությունները հնարավորություն ունեն հանդես գալ որպես գույքի հավատարմագրային կառավարիչներ՝ փաստացի առևտրային կազմակերպության մասնակցության կառավարումը թողնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի վրա: Արդյունքում, հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջի նկատմամբ հսկողությունը շատ դեպքերում կրում է ձևական բնույթ և չի բացառում հավատարմագրային կառավարման գործընթացի վրա պաշտոն զբաղեցնող անձի հնարավոր կամ իրական ազդեցությունը: Ավելին, օրենսդրական փոփոխությունների կիրառման կարճատև պրակտիկայի ընթացքում արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնում հենց նույն առևտրային կազմակերպությանը, ինչի հնարավորությունը գործնականում օրենսդրորեն չի բացառվում: Թեև նշված գործարքով օրենքի ձևական պահանջը պահպանվել է, Հանձնաժողովը խիստ ռիսկային է համարում առկա կարգավորումների կիրառման նման հայեցողությունը: Նկարագրված պրակտիկան խաթարում է նաև հանրային իշխանության մարմնի ու հանրային ծառայության նկատմամբ հանրության լայն հատվածի վստահությունը՝ ստեղծելով կարգավորումների ձևական վերանայման տպավորություն, որը բովանդակային առումով չի զսպում բիզնեսի և իշխանության սերտաճման ռիսկերը:

Բացի հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների հստակեցումը, օրենսդրական փոփոխությունների արդյունքում հավատարմագրային կառավարումը նախատեսվեց որպես ծանուցման ենթակա գործունեություն՝ նախատեսելով հավատարմագրային կառավարման պայմանագրերի՝ պետական գրանցման պահանջ: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ պայմանագրերի գրանցման պահանջը չի տարածվում նախկինում՝ մինչև օրենսդրական փոփոխություններն արդեն իսկ կնքված պայմանագրերի նկատմամբ, ինչի արդյունքում Հանձնաժողովն իր լիազորություններից բխող ուսումնասիրությունների շրջանակներում ստիպված է լինում պայմանագրերը հայցել պաշտոնատար անձանցից: Միաժամանակ, պայմանագրի գրանցման պահանջը ներկայում տարածվում է միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման նկատմամբ, ուստի, բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ պայմանագրերի գրանցման պահանջն առհասարակ բացակայում է:

Այս առումով՝ հարկ է նշել, որ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշվել է օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և ռեեստրի վարման կարգ: Նշված գործողությունը, սակայն, ընթացքի մեջ է:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է անհամատեղելիության պահանջների օրենսդրության հետագա լավարկման գործընթացում անպայմանորեն անդրադառնալ նշված ռիսկերին և նախատեսել գործնականում կիրառելի այնպիսի պահանջներ, որոնք ամբողջությամբ կբացառեն պաշտոն զբաղեցնող անձանց որևէ միջամտություն և ազդեցություն հավատարմագրային կառավարման գործընթացի նկատմամբ:

Հարկ է նաև ընդգծել, որ ինստիտուտի լավարկմանն ուղղված օրենսդրական ջանքերը չեն հանգեցրել հավատարմագրային կառավարման ընդհանուր մշակույթի ձևավորմանը, ինչի մասին է վկայում պաշտոնատար անձանց կողմից գույքի՝ հավատարմագրային կառավարման փոխանցելու փոխարեն դրա օտարման պրակտիկան: Ընդ որում՝ նշվածն առավել մտահոգիչ է այն տեսանկյունից, որ բաժնեմասի օտարման դեպքում անհնար է դառնում դրա կառավարման նկատմամբ անձի ազդեցության գնահատումը՝ նպաստելով սովերային կառավարմանը կամ բիզնես գործընթացներում անձի առավել մեծ ներգրավվածությանը: Արդյունքում, գործնականում անձինք նախընտրում են պաշտոնի ստանձնումից կամ նշանակումից հետո իրենց բաժնեմասն օտարել այլ անձի (հիմնականում՝ ընտանիքի անդամին կամ փոխկապակցված այլ անձանց) և ոչ թե դիմել մասնագիտացված կառավարման:

Վերլուծելով խնդիրը Հանձնաժողովի գործունեության համատեքստում՝ պետք է հավելել, որ Հանձնաժողովը, անգամ այն դեպքերում, երբ առկա է անձի կողմից փաստացի

ձեռնարկատիրությամբ զբաղվելու կասկած, սեփական նախաձեռնությամբ հնարավորություն չուն հարուցելու վարույթ, ինչը գործնականում արձանագրվում է որպես Հանձնաժողովի անգործություն և ազդում Հանձնաժողովի վերաբերյալ ընդհանուր հանրային ընկալման վրա:

Որպես խնդրի լուծում՝ Հանձնաժողովը գտնում է, որ պետությունը պետք է շարժվի հավատարմագրային կառավարիչների մասնագիտացված ինստիտուտի ձևավորման ճանապարհով՝ ապահովելով օրենսդրական և գործնական այնպիսի դաշտ, որի դեպքում պաշտոնատար անձինք կնախընտրեն իրենց գույքի, տվյալ դեպքում՝ բաժնեմասերի կառավարումը վերապահել մասնագիտացված անձանց/կազմակերպություններին՝ ի հակադրումն փոխկապակցված անձանց հանձնելու պրակտիկայի: Միաժամանակ, անհրաժեշտ է առավել սեղմ ժամկետներում վերանայել հավատարմագրային կառավարման պայմանագրերի գրանցման ընթացակարգը, ինչպես նաև պահանջների չպահպանման դեպքում պատասխանատվության կառուցակարգերը:

1.4.3 Կարգավիճակով չպայմանավորված պաշտոնների զբաղեցումը

Շահերի բախման իրավիճակները կառավարելու նպատակով օրենսդիրը սահմանափակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու հնարավորությունը: Հանձնաժողովը, որպես անհամատեղելիության պահանջները մեկնաբանող իրավասու մարմին, հաշվետու տարում շարունակել է հանրային իշխանության մարմիններին և հանրային ծառայողներին տրամադրել խորհրդատվություն պաշտոնների համատեղելիության մասին, առանձին դեպքերում՝ դիմել իրավասու մարմիններ՝ պահանջելով քննել տվյալ մարմնում պաշտոնավարող անձանց կողմից արձանագրված առերևույթ խախտումները:

Հարկ է նկատել, որ հաշվետու տարում քննության առնված դեպքերի զգալի մասը վերաբերել է պետական տարբեր պաշտոններ, այդ թվում՝ պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից զուգահեռաբար համայնքի ավագանու անդամի՝ համայնքային պաշտոն զբաղեցնելու դեպքերին: Հանձնաժողովը, ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջներով, արձանագրել է, որ նշված պաշտոնների համատեղումը հանգեցնում է անհամատեղելիության պահանջի խախտման: Միաժամանակ, ուսումնասիրությունների և խախտումների քննության արդյունքում արձանագրվել է, որ նշված խնդիրը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ «Հանրային ծառայության մասին» օրենքում 2022 թվականին կատարված փոփոխություններով անհամատեղելիության պահանջները

բովանդակող՝ 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է բացառություն ավագանու անդամների համար, ինչը գործնականում հանգեցրել է սույն օրենքի և ոլորտային՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի դրույթների միջև որոշակի խզման և մեկնաբանման տարբերությունների: Գործնականում անհամատեղելիության պահանջների պահպանման վերաբերյալ առաջացած խնդիրների հաղթահարման անհրաժեշտությունից ելնելով՝ 2024 թվականի մայիսի 22-ին ընդունված՝ ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով (ՀՕ-226-Ն) և ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով (ՀՕ-227-Ն) նախատեսվել է բացարձակ արգելք սույն պաշտոնների համատեղման առնչությամբ, և օրենքների դրույթները ներդաշնակեցվել են՝ բացառելով հետագա տարընթերցումները: Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (ՀՕ-227-Ն) անցումային դրույթներով Օրենսդիրը նախատեսել է, որ սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև օրենքն ուժի մեջ մտնելը՝ այսինքն՝ մինչև 2024 թվականի մայիսի 25-ը հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Այդ անձանց հնարավորություն է տրվել շարունակել համատեղ պաշտոնավարումը մինչև տվյալ նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների մեկնաբանման իր լիազորության շրջանակներում հաշվետու տարում դիմումատուներին տրամադրել է համապատասխան պարզաբանումներ: Առանձին դեպքերում, երբ արձանագրվել է, որ անձինք, նախքան օրենքի ուժի մեջ մտնելը չեն համատեղել հանրային կամ հանրային ծառայության պաշտոններն ավագանու անդամի պաշտոնի հետ, Հանձնաժողովը դիմել է իրավասու մարմիններին՝ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հարցը քննելու առաջարկով:

1.4.4 Այլ վճարովի աշխատանքի իրականացումը

«Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Այլ աշխատանքի թույլատրելիության վերաբերյալ Հանձնաժողովը հաշվետու տարում ևս պարզաբանումներ է տրամադրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին: Որպես առավել էական կարելի է առանձնացնել հետևյալները, որոնց վերաբերյալ դիմումները կրել են պարբերական բնույթ.

Ստացված դիմումների մի մասը վերաբերել է զինվորական ծառայություն իրականացնող անձանց կողմից որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ հաշվառվելու և խնամատարություն իրականացնելու հնարավորությանը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «Զինվորական ծառայության մասին»

օրենքների իրավակարգավորումները, ինչպես նաև «Ընտանեկան օրենսգրքի» և «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեգավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը» հաստատելու մասին ՀՀ Կառավարության՝ 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշման կարգավորումները առաջ է քաշել դիրքորոշում առ այն, որ խնամատար ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպումը պայմանագրային հիմունքներով իրականացվող վճարովի գործունեություն է՝ ծառայությունների մատուցում, ինչը, միաժամանակ, չի հանդիսանում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թույլատրելի՝ այլ վճարովի աշխատանք, ուստի, արձանագրվել է, որ հանրային ծառայողի, այդ թվում՝ զիվորական ծառայողի կողմից անձամբ խնամատարություն ստանձնելը և խնամատարության պայմանագրի կողմ հանդիսանալը գործող իրավակարգավորումների պայմաններում թույլատրելի չէ:

Ստացված դիմումների մի մասը վերաբերել է հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից հասարակական կազմակերպությունների հիմնադրման, դրանց անդամակցության կամ դեկլարման հնարավորությանը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքների իրավակարգավորումները, մեկնաբանել է, որ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ վերջինիս անդամակցելու արգելք հանրային ծառայողների համար օրենսդրությամբ նախատեսված չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշվածի դիմաց հանրային ծառայողը ստանում է վարձատրություն կամ այլ եկամուտ:

Առանձին դեպքերում Հանձնաժողովը դիրքորոշում է ներկայացրել նաև կրթական և ստեղծագործական աշխատանքների վերաբերյալ, որոնք յուրաքանչյուր դեպքում մեկնաբանվում են՝ հիմք ընդունելով անձանց կողմից ներկայացված կոնկրետ հանգամանքները և աշխատանքային գործառույթները (դրանց բնույթը):

Հարկ է նշել, որ վճարովի այլ աշխատանք իրականացնելու սահմանափակումը կարիք ունի վերանայման, իսկ թույլատրելի աշխատանքների շրջանակը՝ ընդլայնման, ինչը թույլ կտա մի կողմից չսահմանափակել որակյալ կադրերի մուտքը պետական կառավարման համակարգ, մյուս կողմից կապահովի ներպետական կարգավորումների համապատասխանությունը միջազգային ընդունված չափանիշներին: Նշվածը, որպես ռազմավարական նպատակ, արձանագրվել է նաև 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով:

Վճարովի այլ աշխատանքի իրականացման սահմանափակման մեղմման նպատակով Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից 2024 թվականի երկրորդ կիսամյակում

մշակվել և շրջանառվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով առաջարկվել է սահմանել հանրային ծառայության մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձանց համար վճարովի այլ աշխատանքի իրականացման հնարավորություն՝ թույլտվության ստացման կառուցակարգերի և շահերի բախման կառավարման հավելյալ մեխանիզմների ներդրման միջոցով: Հանձնաժողովի գնահատմամբ՝ նման մոտեցումը թույլ կտա լուծել որակյալ մասնագետների՝ պետական ծառայությունում ներգրավման խնդիրը, այն դարձնելով առավել մրցունակ և գրավիչ: Հանձնաժողովը նախագծի շուրջ ակտիվ քննարկումներ է ունեցել Քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ՝ համատեղ առաջարկներ ներկայացնելով իրավասու մարմին:

Օրենսդրական վերանայումները, կարծում ենք, կարևոր և անհրաժեշտ են ոչ միայն հումանիտար ոլորտներում աշխատանքի հնարավորության ամրագրման (ինչպես նշվում է ռազմավարությամբ), այլև ոչ ռիսկային այլ ոլորտներում աշխատանքի իրականացման հնարավորությունը ապահովելու տեսանկյունից:

1.4.4 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների հետևանքների անհատակությունը

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ անհամատեղելիության պահանջների խախտումը հիմք է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ պաշտոնից ազատման համար: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների (...) խախտման առկայության կամ բացակայության մասին: Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում): Պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Ղեկավարվելով օրենքի վերոնշյալ պահանջներով՝ Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով հարուցված վարույթների արդյունքում ընդունում է խախտման առկայությունը կամ բացակայությունը հաստատող եզրակացություններ: **Գործնականում, սակայն, արձանագրվել են դեպքեր, երբ**

անհամատեղելիության պահանջի խախտման հիմքով Հանձնաժողովի՝ համապատասխան մարմին/իրավասու անձին ներկայացված միջնորդությունները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, թողնվել են առանց քննության: Ավելին, առանձին դեպքում անձի լիազորությունների դադարեցման հարցը քննելու իրավասություն ունեցող մարմինը ոչ միայն հրաժարվել է քննել անձի լիազորությունների դադարեցման հարցը, այլև խախտման առկայության մասին Հանձնաժողովի եզրակացության պայմաններում առաջ է քաշել դիրքորոշում առ այն, որ անձի կողմից չեն խախտվել անհամատեղելիության պահանջները: Նշվածը հատկապես խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ.

➤ Հարկ է ընդգծել, որ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները մեկնաբանող իրավասու մարմինը բացառապես Հանձնաժողովն է, ով ապահովում է նաև անհամատեղելիության պահանջների կիրառման միասնականությունը, հետևապես՝ անձի լիազորությունները դադարեցնելու իրավասություն ունեցող մարմնի կամ անձի կողմից Հանձնաժողովի եզրակացությամբ հաստատված անհամատեղելիության պահանջի խախտման փաստի քննությունը չի կարող համարվել իրավաչափ և առհասարակ, նման ընթացակարգ նախատեսված չէ օրենսդրությամբ: Ավելին, պետք է նկատել, որ Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող օրենքով նախատեսվում է, որ Հանձնաժողովի եզրակացությունները (այդ թվում՝ վերանայման վարույթի արդյունքում ընդունված) կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դրանք փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակում, հետևապես, Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը փոփոխվելու կամ նոր փաստեր իր հայտ գալու դեպքում՝ Հանձնաժողովը վերանայում է իր եզրակացությունը և ընդունում նոր եզրակացություն: Նշվածը ենթադրում է, որ Հանձնաժողովի հաստատած փաստը՝ կապված անհամատեղելիության պահանջի խախտման հետ, չի կարող վերանայվել կամ այլ կերպ մեկնաբանվել այն մարմնի կողմից, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում՝ չնայած գործնականում նման դեպքերի առկայության:

➤ Պետք է նկատել, որ նույն համատեքստում օրենսդրական մեկ այլ մարտահրավեր է Հանձնաժողովի եզրակացության ներկայացման դեպքում դրա քննարկման արդյունքում խախտում թույլ տված անձի լիազորությունների դադարեցման ժամկետի սահմանված չլինելը: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը սահմանում է, որ իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Հանձնաժողովի առաջարկը և արդյունքների մասին ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան եզրակացությունն ստանալու պահից 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին: Սակայն, չեն հստակեցվում անձի լիազորությունների դադարեցման ժամկետները, ինչը մեծացնում է իրավասու մարմնի հայեցողությունների շրջանակը:

➤ Ի լրումն թվարկվածի՝ հարկ է նաև նկատել, որ Հանձնաժողովի առաջարկի քննարկման արդյունքների մասին տեղեկացման ներքո չեն նախանշվում այնպիսի պահանջներ, որոնց ներկայացմամբ իրավասու մարմինները կհիմնավորեն կամ կփաստարկեն իրենց դիրքորոշումը, ինչը նշանակում է, որ, գործնականում, արդյունքների բացակայությունը կամ քայլեր չձեռնարկելու մասին ֆորմալ տեղեկացումը բավարար կլինի սույն դրույթի պահանջի ապահովման համար:

Հանձնաժողովի եզրակացությունների չկատարումն, այս իմաստով, վտանգավոր նախադեպ է և սպառնում է խաթարել անհամատեղելիության պահանջների ինստիտուտի կայունությունն ու այդ պահանջների միասնական կիրառման հնարավորությունը:


Նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է վերանայել օրենսդրական կարգավորումները՝ Հանձնաժողովի եզրակացությունները դարձնելով պարտադիր կատարման ենթակա, ինչը կբացառի մարմինների կողմից խախտումների հաստատման դեպքում գործողություններ չձեռնարկելու պրակտիկան և խախտում թույլ տված անձանց՝ պաշտոնավարումը շարունակելու հնարավորությունը:

1.5 Շահերի բախման վերաբերյալ քննություններ

Հանձնաժողովին, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահվել է լիազորություն՝ քննելու և լուծելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերը: Միաժամանակ, Հանձնաժողովը հետևում է պաշտոնատար անձանց նույն շրջանակի շահերի բախման կարգավորումների պահպանմանը, իսկ բոլոր դեպքերում, երբ անձը չի հանդիսանում Հանձնաժողովի սուբյեկտը, շահերի բախման իրավիճակների քննության կամ լուծման առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններին: Հաշվետու տարում շարունակվել են այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2024 թվականին Հանձնաժողովն իրականացրել է շահերի բախման վերաբերյալ **51 ուսումնասիրություն**, որից **31-ի** դեպքում ուսումնասիրության հիմք են հանդիսացել մեղիա հրապարակումները, **20-ի** դեպքում՝ այլ գերատեսչություններից ստացված գրությունները կամ քաղաքացիների դիմումները: Հատկանշական է, որ շահերի բախման դեպքերի վերաբերյալ ուսումնասիրությունների թիվը էապես աճել է նախորդ տարիների համեմատ: Որպես օրինակ, 2023 թվականին տարեկան կտրվածքով իրականացվել է 6 ուսումնասիրություն՝ մեղիա հրապարակումների և դիմումների հիման վրա: Նույն

ցուցանիշն է գրանցվել նաև 2022 թվականին: Այսպիսով, 2024 թվականին նախորդ տարիների համեմատությամբ շահերի առերևույթ բախման դեպքերի և համապատասխանաբար՝ դրանց ուսումնասիրությունների թիվն աճել է 8.5 անգամ: Հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված հրապարակումների և գրությունների գերակշիռ մասն առնչվել է գնումների գործընթացներում, հատկապես՝ համայնքային գնումներում շահերի բախման դեպքերին,



պատվիրատու մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցությանը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝ փոխկապակցված անձանց օտարման կամ օգտագործման, ինչպես նաև թույլտվությունների տրամադրմանը: Նշվածը վկայում է առանձին ոլորտներում շահերի բախմանն առնչվող խնդիրների՝ համակարգային և համատարած լինելու մասին:

Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում 2024 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջների խախտումներ՝ շահերի բախման իրավիճակում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Հանձնաժողովին հայտարարություն չներկայացվելու դեպքեր, որոնց հիման վրա հարուցել է համապատասխան վարչական վարույթներ և վարչական պատասխանատվության ենթարկել համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող 6 անձանց: Հաշվետու ժամանակահատվածում 8 դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք նախքան որոշում ընդունելը կամ գործողություն կատարելը դիմել են Հանձնաժողով՝ հայցելով շահերի բախման իրավիճակների լուծման առնչությամբ Հանձնաժողովի դիրքորոշումը/առաջարկությունը: 2 դեպքում Հանձնաժողովը հաղորդում է ներկայացրել

Գլխավոր դատախազություն՝ ուսումնասիրության շրջանակներում հանգելով այն եզրահանգման, որ պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կատարված արարքները (ընդունված որոշումները) կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ենթադրյալ հանցագործության հատկանիշներ՝ խնդրելով քննության առնել դեպքերը քրեաիրավական նորմերով սահմանված հիմքերի առկայությունը պարզելու նպատակով: Մեկ դեպքում Հանձնաժողովի հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ, մյուս դեպքում Հանձնաժողովի ներկայացրած տեղեկությունները հիմք են հանդիսացել օպերատիվ ստուգման իրականացման համար:

Հարկ է նկատել, որ իրականացված ուսումնասիրությունների և արձանագրված խախտումների թվի տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական գնումների գործընթացներին առնչվող քննությունների գերակշիռ մասի դեպքում օրենքի ձևական պահանջների պահպանված լինելու պարագայում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել հարուցելու շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտման համապատասխան վարույթներ, այլ քննության է առել նշված իրավիճակները բացառապես շահերի բախման իրավիճակում հայտարարություն չներկայացնելու պահանջի խախտման համատեքստում: Ընդ որում՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորությունը և դրա խախտման հիմքով պատասխանատվությունը ներդրվել է միայն 2023 թվականին, ինչը թեև որոշակիորեն կանխարգելում է շահերի բախման իրավիճակներում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից որոշումների կայացումը կամ գործողությունների կատարումը, սակայն, բովանդակային առումով չի բացառում շահերի բախման իրավիճակները և ամբողջովին կառավարելի չի դարձնում դրանց առաջացման ռիսկերը:

Հարկ է նաև նշել, որ միայն հայտարարություն չներկայացնելու հիմքով հարուցվող վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները և դրանց արդյունքում վարչական տույժի կիրառումը հանրային ընկալման տեսանկյունից խիստ անհամաչափ են դիտվում կատարված խախտումներին կամ խախտումների արդյունքում պատճառված վնասին, ինչը լայն արձագանք է գտել նաև մի շարք լրատվական կայքերի, ոլորտային հասարակական կազմակերպությունների հրապարակումներում:

Հանձնաժողովը պետական գնումների գործընթացներում պրակտիկայում վերհանած շահերի բախման առերևույթ ռիսկերի՝ հատկապես գնումների գործընթացում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց ներգրավվածության և ազդեցության, գնումների մասին օրենսդրության բացերի հաշվառմամբ՝ օրենսդրական փոփոխությունների առաջարկներ է ներկայացրել ոլորտը համակարգող իրավասու մարմնին: Վերհանված խնդիրները, մասնավորապես, վերաբերում են գնումների մասին օրենսդրությամբ փոխկապակցված անձանց շրջանակի՝ խիստ սահմանափակ լինելուն, շահերի բախման համապարփակ կարգավորումների՝ այդ թվում՝ շահերի բախման իրավիճակների լուծման, շահերի բախմամբ կայացված որոշումների (տվյալ դեպքում՝ պայմանագրերի) չեղարկման կառուցակարգերի

բացակայությանը: Միաժամանակ, գնումների գործընթացների նկատմամբ վերահսկողության իմաստով առկա են մարտահրավերներ, որոնք առավել ակնհայտ են համայնքային գնումների ոլորտում:

Որպես հնարավոր լուծում՝ գնումների մասին օրենսդրության վերանայման շրջանակներում Հանձնաժողովն առաջարկվել է ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը՝ տարածելով այն պատվիրատու մարմնում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ (գործող կարգավորումներով՝ շահերի բախումը մասամբ կարգավորվում է միայն գնահատող հանձնաժողովի անդամների համար): Սա թույլ կտա բացառել պետական պաշտոն զբաղեցնող անձանց հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցությունը պետական գերատեսչությունների և հատկապես՝ պաշտոն զբաղեցնող անձանց ղեկավարած գերատեսչությունների պատվիրած մրցույթներին՝ նպաստելով պետական գնումների գործընթացի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը: Օրենսդրական նշված վերանայումը նախատեսված է եղել նաև 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով, ըստ որի՝ պետք է բացառվեն պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացում:

Չնայած «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխություններին՝ հարկ է նկատել, որ շահերի բախման կառուցակարգեր օրենսդրությամբ նախատեսված են ոչ բոլոր պաշտոնների (պաշտոնների խմբերի) համար: Մասնավորապես՝

➤ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա: Շահերի բախման կարգավորումներն, այսպիսով, չեն տարածվում ներկայում համայնքային վարչական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ:

➤ Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի վրա սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում: Վերջիններիս նկատմամբ կիրառելի են հոդվածի՝ շահերի բախման հասկացությունը բովանդակող դրույթները: Միաժամանակ, դատավորի շահերի բախումը կարգավորվում է Դատական օրենսգրքով՝ դատավորի վարքագծի կանոնների ներքո նախատեսելով շահերի բախում թույլ չտալու պարտավորությունը և առանձին հոդվածով կանոնակարգելով ինքնաբացարկի դեպքերը, սակայն նշված կարգավորումների ներքո պաշտոնեական լիազորությունների վրա ազդեցություն ունեցող հարաբերությունների շրջանակն ավելի սահմանափակ է և

առավելապես միտված է մերձավոր ազգակցությամբ պայմանավորված փոխկապակցվածության պարագայում հնարավոր ազդեցության չեզոքացմանը:

➤ Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում 2024 թվականին նախաձեռնվել է օրենսդրական փոփոխությունների գործընթաց՝ ապահովելու ծառայության առանձին տեսակների համար ոլորտային օրենքներով շահերի բախման կարգավորումների համապատասխանեցումը «Հանրային ծառայության մասին» օրենքին, այդ թվում նաև շահերի բախման նոր սահմանման իրացումը ոլորտային օրենքներում: Այդուհանդերձ, փոփոխությունները դեռևս ընդունված չեն, ուստի, ծառայության առանձին տեսակների դեպքում շահերի բախման կառուցակարգերը շարունակում են մնալ թերի: Համայնքի ավագանու անդամի պաշտոն զբաղեցնող անձանց համար համապատասխան կարգավորումներ են նախատեսվում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, որոնք համապարփակ չեն և չեն անդրադառնում շահերի բախման իրավիճակների լուծման կառուցակարգերին:

Ընդ որում, 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի 1.19 գործողությամբ նախատեսվել է շահերի բախման նոր սահմանման իրացումը, որի շրջանակներում դատավորների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները պետք է համապատասխանեցվեին «Հանրային ծառայության մասին» օրենքին: Միաժամանակ, ռազմավարությամբ և դրա գործողությունների ծրագրով անդրադարձ չի կատարվել համայնքային վարչական և հայեցողական պաշտոնների զբաղեցնող անձանց համար շահերի բախման կարգավորումների սահմանմանը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումների՝ նրանց նկատմամբ տարածմանը: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել նշված սուբյեկտների համար շահերի բախման կարգավորումների նախատեսումը, ինչպես նաև վերջիններիս շահերի բախման իրավիճակների քննության ընթացակարգերը:

1.6 Այլ սահմանափակումներ

Հաշվետու տարում Հանձնաժողովում այլ սահմանափակումների վերաբերյալ իրականացրել է 5 ուսումնասիրություն, որից 1-ը՝ մեղիա հրապարակման հիման վրա, 4-ը՝ դիմումների:

Այլ սահմանափակումների վերաբերյալ ստացված դիմումների վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է համապատասխան պարզաբանումներ: Դրանք հիմնականում վերաբերել են մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ

անմիջական վերադասությամբ աշխատանքի արգելքին, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ երրորդ անձանց ներկայացուցիչը լինելու արգելքին:

Նկատելի է, որ Հանձնաժողովի կողմից այլ սահմանափակումների վերաբերյալ ստացված դիմումները և մեղիա հրապարակումներն իրականացված ընդհանուր ուսումնասիրությունների համատեքստում ամենասակավն են եղել, ինչը պայմանավորված է նաև ինստիտուտի՝ ամբողջությամբ կայացած չլինելու հանգամանքով:

Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի 1.22 գործողությամբ նախատեսվել է որպես օրենսդրությամբ 2025 թվականի կատարողականի թիրախ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները, դրանց պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքները և կառուցակարգերի:

Ի թիվս այլնի, սույն օրենքով սահմանվում է, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

Վերահսկողության տեսանկյունից հատկանշական է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող այլ սահմանափակումները չպահպանելը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Այդուհանդերձ, գործնականում, պաշտոնավարման դադարեցումից հետո անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը կիրառելի չի լինում, հետևապես, նշված դրույթը ձևական բնույթ է ստանում՝ չապահովելով դրա սահմանման նպատակի իրացումը: Այլ սահմանափակումների, մասնավորապես՝ հետաշխատանքային սահմանափակումների խնդիրներին է անդրադառնում նաև Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպությունը (OECD) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի [գեկույցում](#), ըստ որի՝ սույն հիմքով գնահատման շրջանում քննություններ չեն իրականացվել և պատասխանատվություն չի կիրառվել:

Այսպիսով, անհրաժեշտ է միջազգային փորձի տեղայնացմամբ օրենսդրորեն հստակեցնել հետաշխատանքային սահմանափակումները, դրանց կիրառման պայմանները և պատասխանատվության կառուցակարգերը:

1.7 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.3 կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառնություններից է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը: Միաժամանակ, Հանձնաժողովի լիազորությունների ներքո ամրագրվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրի վարումը և նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալների հրապարակումը:

Չուգահեռաբար՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման գործընթացների կանոնակարգման լիազորությունը «Հանրային ծառայության մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել 2023 թվականից:

Նշված լիազորությունների համատեքստում հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանվել են Հանձնաժողովի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ, և ուժի մեջ մտել 2024 թվականի հունվարի 1-ից:
- 2024 թվականի հունվարին հրապարակվել է նաև նվերների հաշվառման էլեկտրոնային ձևաթուղթը, որով, նախքան նվերների հաշվառման ռեեստրի գործարկումը, իրականացվում է նվերների հաշվառումը:
- Միաժամանակ, 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված՝ ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-148-Ն, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-149-Ն, «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքներով վերանայել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները, թույլատրելի համարվող նվերների շրջանակը, արարողակարգային նվերների հաշվառման առանձնահատկությունները: Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում նախաձեռնել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի

վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը հաստատելու մասին իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01-Ն որոշման փոփոխություններ:

- Հանձնաժողովի՝ 2024 թվականի օգոստոսի 2-ի N 05-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Պետական արարողակարգի ծառայության՝ նվերների հաշվառման լիազորության ամրագրումը, վերանայվել է նվերների հաշվառման գործընթացը, հաշվառման ենթակա նվերների շրջանակը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված կարգավորումներին, սահմանվել են շուտ փչացող կամ պահպանման էական ծախսեր պահանջող գույքի հանձնման կարգավորումներ և կատարվել վերը նշված օրենսդրական փոփոխություններից բխող այլ ներդաշնակեցումներ:
- Հանձնաժողովի մեկ այլ՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 06-Ն որոշմամբ վերանայվել են նաև նվերների հանձնման գործընթացին առնչվող նորմերը՝ նախատեսելով առավել ճկուն ընթացակարգ վարչապետի, փոխվարչապետների, Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի նախագահի կողմից ստացվող նվերների հանձնման համար:
- Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի հունիսի 27-ին հրապարակել է Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույց՝ խորհրդատվության ստացման գործընթացը պարզեցնելու և նվերների ընդունման ու հաշվառման կարգավորումների պատշաճ կիրարկումն ապահովելու նպատակով: Ուղեցույցը կիրառելի է ոչ միայն Հանձնաժողովի, այլև բարեվարքության հարցերով կազմակերպիչների և օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովների կողմից նվերների թույլատրելիության հետ կապված իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք տրամադրելիս:
- Հանձնաժողովը հաշվետու տարում հաշվառման գործընթացի կազմակերպմանը զուգահեռ խորհրդատվություն և մեթոդական աջակցություն է տրամադրում հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին՝ նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցերի շուրջ (ամենօրյա ռեժիմով):

Կատարված փոփոխությունները հնարավորություն են տվել ապահովել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը՝ հաշվառման ձևաթղթերի միջոցով և, սահմանված դեպքերում՝ պետության հանձնումը:

Այսպես՝ 2024 թվականին հաշվառվել և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով

Ներկայումս նվերների հաշվառման գործընթացը շարունակվում է դեռևս էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով:

Ռեեստրի ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Հանձնաժողովի գործառույթների թվայնացում բաժնում:

1.8 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի լիազորությունն է ապահովել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարումը և հրապարակումը: Այս համատեքստում 2024 թվականին Հանձնաժողովը համագործակցություն է հաստատել Վիճակագրական կոմիտեի հետ:

Քննարկումների արդյունքում մշակվել և Հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N 06-Լ որոշմամբ հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը: Ուղեցույցը նախատեսված է կարգավորելու կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման հետ կապված հարաբերությունները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը և համակարգվածությունը: Թեև նախորդող տարիներին ևս Հանձնաժողովի կողմից հավաքագրվել են համապատասխան վիճակագրական տվյալներ՝ տարբեր մարմիններում իրականացվող քննությունների և դրանց արդյունքների վերաբերյալ, մեթոդաբանական ուղեցույցի հաստատմամբ հստակեցվել են հավաքագրման ենթակա տվյալները և դրանց ստացման գործընթացը:

«Հանրային ծառայության մասին» օրենքով՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահված է համագործակցություն Հանձնաժողովի հետ: Համաձայն սույն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրությունը և նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Հանձնաժողովին:

Միաժամանակ, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ընթացքում ձևավորված պրակտիկան կարևոր է հանրային իշխանության առանձին մարմիններում և լայն իմաստով՝ հանրային ծառայության ամբողջ համակարգում բարեվարքության համակարգի վերաբերյալ համապարփակ վիճակագրություն ձևավորելու համար:

2024 թվականի տարեկան վիճակագրության վարման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբեր ամսին մեթոդաբանության հիման վրա մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթեր, որի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել հանրային իշխանության մարմիններից, այդ թվում՝ համայնքապետարաններից:

2024 թվականին անցկացված հարցմանը մասնակցել են պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման 83 մարմիններ: Հարցաթերթերը լրացվել են բարելավրթության հարցերով կազմակերպիչների կողմից: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ՝ 2024 թվականի հարցմանը մասնակցած գերատեսչությունների թիվը 54-ով ավելացել է: Միաժամանակ, որակական առումով ևս ստացված տվյալները նախորդ տարվա համեմատ առավել բովանդակային և ճշգրիտ են:


1.8.1 2024 թվականի ամփոփ վիճակագրություն

Վիճակագրական ամփոփ տվյալների համաձայն՝ հարցմանը մասնակցած գերատեսչությունների ճնշող մեծամասնությունը չունի վիճակագրության վարման ներքին կառուցակարգեր: Դրանք գործնականում կամ չեն վարվում կամ առանձին գերատեսչություններում վարվում են ներքին մատյանների պահման եղանակով, մի քանի դեպքում՝ նման ձևաչափերը մշակման փուլում են:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ էականորեն ավելացել են բարելավրթության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացված քննությունները: Մասնավորապես՝ 2023 թվականին ներկայացված տվյալների համաձայն՝ հանրային իշխանության մարմիններում իրականացվել է նշված հիմքով 51 քննություն, մինչդեռ, 2024 թվականի նույն հիմքերով պայմանավորված քննությունների ընդհանուր թիվը կազմել է 142:

2024 թվականին հարցմանը մասնակցած 83 գերատեսչություններից 12-ում արձանագրվել են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավակարգավորումների խախտման 143 դեպք, որից՝ 127-ը վերաբերել է վարքագծի կանոններին, 8-ը՝ շահերի բախման կարգավորումներին, 2-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, 6-ը՝ անհամատեղելիության պահանջներին: Արձանագրված խախտումների հիմք են հանդիսացել իրականացված օպերատիվ միջոցառումները, մոնիթորինգի արդյունքները, հանրային իշխանության համապատասխան մարմինների վերահսկողական տարբեր գործողությունները, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից ստացված դիմումները, որոշ դեպքերում՝ թեժ գծի հեռախոսազանգերը, ինչպես նաև լրատվական կայքերի հրապարակումները:

Բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով քննություններ



Հարկ է նկատել, որ հաշվետու տարում հարցմանը մասնակցած գերատեսչություններում արձանագրված վարքագծի կանոնների խախտման 127 դեպքից 106-ն արձանագրվել է նույն գերատեսչությունում: Արդյունքում 35 ծառայող ազատվել է աշխատանքից, 44 ծառայող ենթարկվել է «Նկատողություն» կարգապահական տույժի, 23-ը՝ «Խիստ նկատողություն», 4-ը՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման: Մեկ այլ գերատեսչությունում իրականացվել է 9 ծառայողական քննություն, ինչի արդյունքում՝ 2 ծառայող ենթարկվել է «Նկատողություն» կարգապահական տույժի և 6 ծառայող ենթարկվել է «Նախազգուշացում» կարգապահական տույժի: «Նկատողություն» կարգապահական տույժերից 1-ը կիրառվել է նույն անձի նկատմամբ միաժամանակ շահերի բախման և վարքագծի կանոնների խախտման համար: Երկուայլ գերատեսչություններում չորս աշխատակից ենթարկվել են կարգապահական պատասխանատվության. վերջիններիս նկատմամբ հայտարարվել է «Խիստ նկատողություն»: Մեկ այլ դեպքում՝ իրականացվել է 3 ծառայողական քննություն, որի արդյունքում 2 անձի նկատմամբ կիրառվել է «Ծառայության դադարեցում» տեսակի տույժ: Գերատեսչություններից մեկում իրականացված ծառայողական քննության արդյունքում կիրառվել է «Ի գիտություն» պատասխանատվության միջոցը: Վերջին գերատեսչությունում ծառայողական քննություն է իրականացվել, սակայն արդյունքում պատասխանատվության միջոց չի կիրառվել, քանի որ այն պաշտոնատար անձը, ում նկատմամբ վարվել է ծառայողական քննություն, ազատվել է աշխատանքից (հաստիքների կրճատում): Եվս երկու դեպքում ծառայողական քննության արդյունքում կիրառված պատասխանատվության միջոցը չի հստակեցվել: Գերատեսչություններից երկուսում արձանագրվել են անհամատեղելիության պահանջների խախտման 6 դեպք, որոնցից 5-ը՝ նույն գերատեսչությունում: Դրանցից 3 դեպքում հանրային ծառայողն ազատվել

է իր զբաղեցրած պաշտոնից, 1 դեպքում՝ համաձայն իր դիմումի, 2 դեպքում՝ ծառայողական քննության արդյունքում: Մյուս 2 դեպքում կարգապահական տույժերից կիրառվել է «Նկատողություն», ևս 1 դեպքում՝ «Խիստ նկատողություն»:

Հարցմանը մասնակցած գերատեսչություններում արձանագրվել են շահերի բախման կարգավորումների խախտման 8 դեպք, որոնցից 5-ն արձանագրվել են նույն գերատեսչությունում: 2 դեպքում կիրառվել է «Նկատողություն» կարգապահական տույժ, 4 դեպքում՝ «Խիստ նկատողություն»: Թեև ընդհանուր հարցադրումների շրջանակներում ի պատասխան նշվել է, որ համապատասխան քննություն է իրականացվել, այնուամենայնիվ, քննության հիմքը, դրա շրջանակներում կիրառված պատասխանատվության միջոցը կամ քննության արդյունքը չեն հստակեցվել:

Ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ արձանագրումները՝

- Հանրային իշխանության առանձին մարմիններում դեռևս բացակայում են բարեվարքության համակարգի տարրերի խախտման քննությունների առնչությամբ վիճակագրության վարման ներքին մեխանիզմները և կարգավորումները՝ չնայած վիճակագրության վարման օրենսդրական պահանջի առկայությանը, որը գլխավորապես վերապահվում է բարեվարքության հարցերով կազմակերպիչներին.
- Թեև բարեվարքության համակարգի տարրերին առնչվող խախտումների քննությունների ընդհանուր թիվը նախորդող տարիների համեմատությամբ աճել է, դրանք շարունակվում են իրականացվել կարգապահական խախտումների քննության ընդհանուր կարգով՝ չնայած՝ նման խախտումները ենթակա են քննության բացառապես էթիկայի հանձնաժողովների կողմից.
- Հարկ է նկատել, որ բարեվարքության համակարգի տարրերին առնչվող ենթադրյալ խախտումների՝ էթիկայի հանձնաժողովից բացի այլ սուբյեկտների (հանձնաժողովի կամ անձանց) կողմից քննությունների պրակտիկան իր հերթին բացառում է նաև էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման հիման վրա Հանձնաժողով դիմելու և այդպիսով՝ այդ եզրակացությունների բողոքարկման օրենսդրական հնարավորությունը:

Սույն վիճակագրությունը, կարծում ենք, հավելյալ ազդակ է՝ վարքագծի ոլորտային կանոնների հաստատման և դրանց միատեսակ մեկնաբանման, էթիկայի հանձնաժողովների ձևավորման և գործունեության, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի կատարելագործման ուղղությամբ օրենսդրական փոփոխությունների, որոնք տեղ են գտել նաև ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրում:

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ


2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում և հայտարարագրերի ներկայացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը գործուն քայլեր է իրականացրել հայտարարագրման գործընթացի կանոնակարգման, առկա բացերի վերացման, հայտարարագրերի ներկայացումն առավել սահուն և դյուրին իրականացնելու, չներկայացված հայտարարագրերը հավաքագրելու ուղղությամբ:


Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների և հայտարարագրերի չներկայացման համար զուգահեռ վարչական վարույթների արդյունքում 2024 թվականի ընթացքում ներկայացման ենթակա հայտարարագրերի չներկայացման դեպքերն էապես նվազել են:

2024 թվականի ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ 17%-ով ավելի հայտարարագիր է ներկայացվել Հանձնաժողով: Այսպես, 2024 թվականին ներկայացվել է 20,085, իսկ 2023 թվականին՝ 17,149 հայտարարագիր: Հարկ է նշել նաև, որ հայտարարագրման գործընթացում առաջին անգամ նոր համակարգի միջոցով հնարավոր է եղել ապահովել ավտոմատացված ծանուցումների ուղարկումը տարեկան հայտարարագրերի հանձնման ժամանակահատվածում (2024 թվականի հունվարի 1-ից մայիսի 31-ը) յուրաքանչյուր ամսվա 1-ին և ժամկետի ավարտից 10 օր առաջ, ինչպես նաև ժամկետի ավարտի հաջորդ օրը: Այս գործողությունների արդյունքում հնարավոր է եղել ապահովել տարեկան հայտարարագրերի ներկայացման աննախադեպ ցուցանիշ, մասնավորապես՝ մայիսի 31-ի օրվա վերջի դրությամբ չի ներկայացվել պաշտոնատար անձի ընդամենը 201 հայտարարագիր, իսկ պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրված ընտանիքի անդամի՝ 1578: Համեմատության համար պետք է նշել, որ նախորդ տարիների ընթացքում մինչև 2023 թվականը թվային տվյալի դուրսբերման հնարավորությունը բացակայել է, իսկ 2023 թվականի տվյալներով թիվը կազմել է պաշտոնատար անձի ընդամենը 693 հայտարարագիր, իսկ ընտանիքի անդամի՝ 2415:

Մայիսի 31-ի դրությամբ տարեկան հայտարարագիր չներկայացրած անձինք



Իրականացված աշխատանքերի արդյունքում 6166 պաշտոնատար անձանցից 2023 թվականի տարեկան հայտարարագրեր չեն ներկայացրել 17-ը, այսինքն՝ 2023 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցողների 0.27%-ը, իսկ 2024 թվականի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիր՝ 940-ից 15-ը, այսինքն՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց 1.59%-ը, իսկ դադարեցնելու՝ 1001-ից 36-ը, այսինքն՝ 3.59%-ը, որոնց դեպքում այդ անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ, իսկ գրավոր ծանուցումներն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում չներկայացնելու դեպքերում նախաձեռնվել են համապատասխան վարչական վարույթներ:



Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ապահովել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 814 ուղղման դիմումի ընթացք, որոնք վերաբերել են 1424 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների փոփոխությանը, որոնցից նախորդիվ ստացված, սակայն համակարգի ֆունկցիոնալության բացակայությամբ պայմանավորված՝ կասեցված է եղել 611 դիմումի ընթացք, որոնք վերաբերել են 1037 հայտարարագրերի:


Նշված դիմումներից 16-ը մերժվել են, քանի որ դիմումում նշված անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից այլ կերպ բացահայտված են եղել:

2.2 Աջակցություն հայտարարատուներին

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Հանձնաժողովը հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրել հետևյալ գործիքներով.

1. contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ստացվել է 480 գրավոր հարցում,
2. հեռախոսազանգերի թիվը կազմել է շուրջ 5500,
3. Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով ստացվել է 272 գրավոր հարցում:

Բոլոր այն հայտարարատուները, ովքեր չեն ստացել Համակարգ մուտք գործելու համար տվյալներ կամ ում չի հաջողվել ստացված տվյալներով մուտք գործել Համակարգ, հնարավորություն են ունեցել պահանջվող տվյալները լրացնել Հանձնաժողովի կայքում հրապարակված հղումով ներկայացված ձևաթղթում, ինչի արդյունքում լրացված տվյալների համաձայն հայտարարատուներին ուղարկվել է օգտանուն և նոր գաղտնաբառ: Հաշվետու ժամանակահատվածում այս գործիքի միջոցով հայտարարատուների կողմից ներկայացվել է շուրջ 2400 հայտ:



3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի վերլուծություն

Պաշտոնատար անձանց գույքային դրության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման, կոռուպցիոն հնարավոր ռիսկերի վերահսման ու զսպման նպատակով Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում շարունակել է հայտարարագրերի վերլուծության գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում ռիսկային ցուցանիշների սահմանման և հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա 74 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի 121 անդամների 646 հայտարարագրերը վերլուծվել են:

Քննարկված վերլուծությունների և ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում 125 հայտարարատուների 338 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված, 4 անձանց նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ (3-ի դեպքում Հանձնաժողովը որոշել է կիրառել վարչական տույժ՝ 200,000 ՀՀ դրամի չափով, 1-ի դեպքում որոշում չի կայացվել), 7 դեպքով գործի նյութերն ուղարկվել⁴ են Գլխավոր դատախազություն (4 դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ):

Հաղորդումներից մեկը ներկայացվել է դատավորի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրի, ինչպես նաև գույքի ձեռքբերման՝ օրինական եկամուտներով չհիմնավորվելու կասկածի շրջանակում, ընդ որում, դատավորի նկատմամբ Հանձնաժողովի որոշմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, քանի որ արձանագրված խնդիրներն իրենց էությամբ վերաբերել են այդ դատավորի ընտանիքի անդամներին:

Հաղորդումներից 2-րդի համար հիմք են հանդիսացել ՋԼՄ հրապարակման հիման վրա Հանձնաժողովում իրականացված՝ ԱԺ պատգամավորի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի համալիր վերլուծության արդյունքները: Վերլուծության արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված՝ գույքային դրությանն առնչվող կասկածները չեն փարատվել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված պարզաբանումներով, քանի որ դրանք որոշ դեպքերում եղել են ոչ ամբողջական, առանց հիմնավորող փաստաթղթերի և հակասել են միմյանց, նաև Հանձնաժողովի մոտ առկա են եղել հայտարարատուի կողմից կեղծ սնանկության կասկածներ:

⁴ Հաղորդումներից 3-ը Հանձնաժողովից ելքագրվել են 2025 թվականին

Հաղորդումներից մեկը վերաբերել է նախարարի նախկին տեղակալի և նրա ընտանիքի անդամի կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում կանխիկ դրամական միջոցների և բանկային հաշիվներում առկա գումարների ծագման աղբյուրի, ինչպես նաև անշարժ գույքի և տրանսպորտի միջոցի ձեռքբերման՝ օրինական եկամուտներով չհիմնավորվելու կասկածին:

Մեկ այլ հաղորդում վերաբերել է Հաշվեքննիչ պալատի նախկին անդամի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում կանխիկ դրամական միջոցների օրինական եկամուտներով չհիմնավորվելու կասկածին:

Մյուս հաղորդումը վերաբերել է դատավորի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծությանը: Դատավորի և նրա ընտանիքի անդամների 2018 թվականի տարեկան ընթացիկ ծախսերի և այլ ծախսերի հանրագումարը կազմել է բացասական մեծություն: Նաև Հանձնաժողովի առկա են եղել կասկածներ առ այն, որ պաշտոնատար անձը փաստացի տիրապետել է տրանսպորտի միջոց, որը պատկանում է այլ անձի: Առկա կասկածները փարատելու նպատակով պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձից պահանջվել է ներկայացնել իրավիճակային հայտարարագիր, ինչի արդյունքում՝ Հանձնաժողովի մոտ առկա կասկածները՝ տվյալ անձի օրինական եկամուտներով տրանսպորտի միջոցը ձեռք բերելու մասով, չեն փարատվել, ուստի Հանձնաժողովը գործի նյութերը ուղարկել է Դատախազություն, միաժամանակ դատավորի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Մյուս 2 հաղորդումները վերաբերել են Հանձնաժողովի ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված՝ նախկին պաշտոնատար անձի և նրա կնոջ հայտարարագրերի վերլուծությանը, որի շրջանակում երկու հայտարարատուներն էլ հրաժարվել են Հանձնաժողով ներկայացնել հայցված պարզաբանումներ, ինչի արդյունքում Հանձնաժողովը երկու դրվագով էլ գործի նյութերն ուղարկել է Դատախազություն:

Մնացած դեպքերով Հանձնաժողով ներկայացված պարզաբանումները հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գնահատման փուլում են:

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից առաջին անգամ կայացվել է հայտարարագրերի վերլուծության շրջանակում իրավիճակային հայտարարագիր պահանջելու մասին որոշում: Ընդ որում, նման 4 որոշում է կայացվել, որից 1-ը՝ դատավորի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի համալիր վերլուծության շրջանակում ի հայտ եկած՝ փաստացի տնօրինվող գույքի առկայության վերաբերյալ կասկածի հիման վրա: Երեք որոշում կայացվել է Հանձնաժողովի սահմանած ռիսկային ցուցիչների հիման վրա իրականացված՝ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծության ընթացքում ի հայտ եկած՝ 3-րդ անձանցից ստացված նվիրատվությունների ծագման աղբյուրների վերաբերյալ կասկածները փարատելու նպատակով:

3.2 ԶԼՄ հրապարակումների, անձանց գրավոր դիմումների և կուսակցությունների տարեկան հաշվետվությունների հիման վրա ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացված ԶԼՄ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված՝ հաշվետու ժամանակահատվածում կատարված 46 հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են ուսումնասիրություններ 132 հայտարարատուների (94 պաշտոնատար անձ և 38 ընտանիքի անդամ) վերաբերյալ: Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում կատարված հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրությունները, որոնց արդյունքում՝ 18-ի դեպքում որոշվել է իրականացնել պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծություն: Միաժամանակ, 57 ուսումնասիրությունների դեպքում որոշվել է հայտարարատուներից հայցել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր, որոնց գնահատումը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ընթացիկ փուլում է գտնվել: Հատկանշական է, որ մյուս դեպքերում մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ հետագա ընթացքի անհրաժեշտությունը բացակայել է, ուստի հայտարարատուներին առաջարկվել է իրենց հայտարարագրերում կատարել համապատասխան ուղղումներ:

Միևնույն ժամանակ, կուսակցությունների 2022, 2023 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում հաշվետվությամբ ներկայացված նվիրատվությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունն ստուգելու համար իրականացվել է կուսակցությանը նվիրատվություն կատարած՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու անձանց, մասնավորապես՝ 36 պաշտոնատար անձանց և ընտանիքի 32 անդամների՝ 68 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների ստուգում, որոնց արդյունքում նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 13 վարույթ՝ 9 անձանց նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 200,000 ՀՀ դրամի չափով, 4 անձանց նկատմամբ հարուցված վարույթը կարճվել է:

4 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

2024 թվականին ընդունվել են «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքը:

2022 թվականի ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք կապված էին կուսակցությունների հաշվետվությունների հրապարակման գործընթացի հետ.

- Կուսակցությունների կողմից Հանձնաժողովին են ներկայացվել հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից (azdarar.am) գեներացված թվեր պարունակող փաստաթղթեր, որոնց հիման վրա հնարավոր չէր ճշգրտորեն ստուգել՝ արդյոք հաշվետվությունն իրականում հրապարակվել է, թե ոչ:
- Հանձնաժողովի համար խնդրահարույց էր հրապարակման փաստի ստուգումը որոնման գործիքի միջոցով, քանի որ չէին կիրառվում վերնագրերի հրապարակման միասնական չափանիշներ, որոնումը հաճախ չէր տալիս հստակ արդյունքներ:
- azdarar.am կայքում հաշվետվությունները հրապարակման ներկայացնելիս չէր ստուգվում, թե արդյոք հաշվետվությունն համապատասխանում է ԿԿՀ-ի սահմանած ձևաչափին, չէր վերահսկվում, որ հրապարակվող նյութերում չլինեն հրապարակման ոչ ենթակա անձնական տվյալներ:

2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման և հրապարակման նոր կարգավորումը, որի նպատակն է ապահովել գործընթացի պարզեցում, թափանցիկություն և արդյունավետ վերահսկողություն: Ըստ նոր կարգավորման՝

- Կուսակցությունները պարտավոր են հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը,
- նվազեցվել է կուսակցությունների վարչական բեռը, մասնավորապես կուսակցությունները այլևս չեն ներկայացնի աուդիտի կազմակերպման համար նախնական տեղեկություններ, ինչպես նաև չեն հրապարակի իրենց հաշվետվությունները azdarar.am կայքում, այլ Հանձնաժողովը կապահովի դրանց հրապարակումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.cpcarmenia.am-ում, հատուկ ձևավորված առանձին բաժնում տեղադրելու միջոցով,
- փոփոխվել են կուսակցությունների կողմից ստացվող նվիրատվությունների առավելագույն չափերը, ներդրվել են նպատակային ֆինանսավորման տրամադրման նոր մեխանիզմներ:

Չարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում ամբողջությամբ ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև կուսակցության պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացման բաղադրիչը, ինչը հնարավորություն է տալիս ամբողջ գործընթացն իրականացնել Հանձնաժողովի էլեկտրոնային հարթակի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով:

Այս փոփոխությունները ստեղծում են ավելի թիրախային և հասցեական կարգավորումներ, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ վերահսկել կուսակցությունների ֆինանսական գործունեությունը և ապահովել քաղաքական գործընթացների թափանցիկությունը:

Հանձնաժողովն ընդգծում է, որ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման գարծընթացում Հանձնաժողովի մանդատից բխող գործառույթների պատշաճ իրականացման համար արդիական են մնում կուսակցություններին նվիրատվություններ կատարած անձանցից իրավիճակային հայտարարագրի պահաջելու, ինչպես նաև հաշվետվության ստուգման ժամանակ օպերատիվ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով իրավասու մարմիններին դիմելու լիազորությունների սահմանման հարցերը:

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

2024 թվականի հունվարի 29-ին Հանձնաժողովն ընդունել է «Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին» [N 01-Ն որոշումը](#), որով, ի թիվս այլնի, սահմանվել է, որ կուսակցություններն անհրաժեշտ տեղեկությունները ներկայացնում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը, իսկ 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 25-օրյա ժամկետում: Որոշումն ուժի մեջ է մտել 2024 թվականի փետրվարի 7-ին, որից հետո՝ 25-օրյա ժամկետում, 46 կուսակցություն Հանձնաժողով է ներկայացրել տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բացի պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններից, հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի են ենթակա նաև 3 կուսակցությունների տարեկան հաշվետվություններ, դրանք են՝ «Հայաստանի հանրապետական», «Հայրենիք» և «Ապրելու երկիր» կուսակցությունները:

Հանձնաժողովի կողմից հայտարարվել է մրցույթ՝ 8 կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով: Սահմանված

ընթացակարգով մրցույթի արդյունքում վերջնական հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվել են աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Կնքված պայմանագրերի հիման վրա՝ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրվել են համապատասխան աուդիտորական եզրակացություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում աուդիտորական կազմակերպությունների կողմից ստացվել են նաև պետական ֆինանսավորման և պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի հաշվետվությունների ստուգման համար:

4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի համատեքստում՝ Հանձնաժողովն իրականացրել է պետական ֆինանսավորման ենթակա՝ «Վերածնվող Հայաստան», «Հայ Յեղափոխական Դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր», «Հայաստանի հանրապետական» և «Հայրենիք» կուսակցությունների 2022 և 2023 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգումը, ինչի շրջանակներում անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր են ստացվել նաև կուսակցություններից, որոնք համադրվել են պետական մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների հետ:

4.3.1 Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ.

1. «Հանրապետություն» կուսակցության 2022 թվականի Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, ինչպես նաև կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքերի

առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով («Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը»), ինչպես նաև 189.16-րդ հոդվածի 1-ին մասով («Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը») նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ երկու վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթին, ապա այն հարուցվել էր հասարակական կազմակերպության կողմից կուսակցությանը չթույլատրված նվիրատվություն կատարելու հիմքով, և եզրափակվել է՝ հայտարարելով կազմակերպության նախագահին բանավոր դիտողություն և արարքի նվազ նշանակության հիմքով [կարճվել](#) է գործի վարույթը:

3. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված, կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը:

4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, ինչպես նաև կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ երեք վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթներից մեկը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը, իսկ մյուսը՝ եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական [տույժ](#) նշանակելու մասին որոշման ընդունմամբ:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթին, ապա այն եզրափակվել է իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժի կիրառմամբ:

5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2022 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված, Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու և նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխանաբար 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի («Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը») 3-րդ մասով և 189.20-րդ («Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը») հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 5 վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը:

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով նախաձեռնված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ:


Ինչ վերաբերում է Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված թվով 3 վարույթներին, ապա հարկ է նշել, որ դրանցից մեկի վարույթը կասեցվել է, և գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն, իսկ մյուս 2 վարույթների արդյունքում ընդունվել են նվիրատուների նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ:

6. «Քաղաքացիական պայմանագիր» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունների կողմից Հանձնաժողովի պահանջով ոչ ամբողջական փաստաթղթեր տրամադրելու դեպքերի առթիվ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ չեն նախաձեռնել՝ հաշվի առնելով գործընթացի՝ առաջին անգամ իրականացման փաստը, ինչպես նաև գնահատելով չներկայացված տվյալների էականության, ինչպես նաև տվյալների գնահատման փուլում ստուգման արդյունքների վրա դրանց հավանական ազդեցության հանգամանքը:

Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների և չթույլատրված նվիրատվությունների

դեպքերով կուսակցությունների ստացած նվիրատվությունները բոլոր կուսակցությունների կողմից վերադարձվել են նվիրատուներին կամ պետական բյուջե:

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված, չթույլատրված, օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվություններ, ինչպես նաև կանխիկացումներ (ՀՀ դրամ)



Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում՝ պետական բյուջե վերադարձվել է ընդհանուր՝ 4,286,999 ՀՀ դրամ, իսկ նվիրատուներին՝ 18,512,500 ՀՀ դրամ գումար:

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում հայտնաբերվել են նաև առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքեր, որոնց վերաբերյալ գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն: Առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող 3 դեպքերից 2-ով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Նշված վարույթները կարճվել են քրեական իրավասու մարմինների կողմից, որի դեմ Հանձնաժողովի կողմից տարվել են բողոքներ՝ վերադասության և դատական կարգով:

4.3.2 Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգում.

1. «Հանրապետություն» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

3. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել, և ստուգումն ավարտվել է:

4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ կուսակցության կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նախաձեռնված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ:

5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգմամբ հայտնաբերված՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու, կուսլ ՀՀ օրենսգրքի համապատասխանաբար 189.16-րդ հոդվածի 1-ին մասով, 189.15-րդ հոդվածի («Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը») 3-րդ մասով, 189.21-րդ հոդվածի 1-ին մասով և 189.20-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 14 վարույթ: Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու դեպքերի առթիվ Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նախաձեռնված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ:


Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հարուցված վարույթը եզրափակվել է կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ կարճելով գործի վարույթը:

Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված թվով 7 վարույթներից 2-ը կարճվել են՝ իրավաբանական անձանց պաշտոնատար անձանց նկատմամբ բանավոր դիտողության հայտարարմամբ՝ արարքի նվազ նշանակության հիմքով, իսկ նույն հիմքով հարուցված մյուս 5 վարույթները եզրափակվել են՝ իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տույժերի կիրառմամբ:

Օրենսգրքի 189.20-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հարուցված թվով 2 վարույթները եզրափակվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ:

Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի նվիրատվությունների և չթույլատրված նվիրատվությունների դեպքերով կուսակցությունների ստացած նվիրատվությունները բոլոր կուսակցությունների կողմից վերադարձվել են նվիրատուներին կամ պետական բյուջե:

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված՝ չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվություններ, ինչպես նաև կանխիկացումներ ըստ կուսակցությունների (ՀՀ դրամ)



Նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների շրջանակներում պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում պետական բյուջե է վերադարձվել ընդհանուր՝ 13,077,898 ՀՀ դրամ, իսկ նվիրատվություններին՝ 8,725,000 ՀՀ դրամ գումար:

Միաժամանակ, պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում հայտնաբերվել է առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող 1 դեպք, որի վերաբերյալ գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որը հաշվետու ժամանակահատվածում գտնվել է քննության փուլում:

Հանձնաժողովի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում ընդունվել են պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին համապատասխան որոշումներ՝ հիմք ընդունելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերը: Այդ որոշումների համաձայն՝

1. Առկա են եղել հիմքեր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմել է՝ 53,661,800 ՀՀ դրամ:

2. Առկա են եղել հիմքեր «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմել է՝ 30,500,000 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ «Հայաստան» խմբակցության N 25/12/23 որոշման հիման վրա 2023 թվականին տրամադրվող պետական նպատակային ֆինանսավորման գումարը բաշխվել է «Հայաստան» դաշինքի կազմում ընդգրկված կուսակցությունների միջև, որի արդյունքում «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությանը հասանելիք պետական նպատակային ֆինանսավորման մասը կազմել է 61,000,000 ՀՀ դրամ:

3. Առկա են եղել հիմքեր «Վերածնվող Հայաստան» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմել է՝ 1,072,000 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ «Հայաստան» խմբակցության N 25/12/23 որոշման հիման վրա 2023 թվականին տրամադրվող պետական նպատակային ֆինանսավորման գումարը բաշխվել է «Հայաստան» դաշինքի կազմում ընդգրկված կուսակցությունների միջև, որի արդյունքում «Վերածնվող Հայաստան» կուսակցությանը հասանելիք պետական նպատակային ֆինանսավորման մասը կազմել է 4,288,000 ՀՀ դրամ:


4. Առկա են եղել հիմքեր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման երեք քառորդը՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմել է 15,133,200 ՀՀ դրամ:

5. Առկա են եղել հիմքեր «Հանրապետություն» կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորումն ամբողջությամբ՝ Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված դրույթներին համապատասխանը, որը կազմել է 15,503,200 ՀՀ դրամ:

Վերոգրյալի վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են ստորև.

N	Կուսակցության անվանում	Պետական նպատակային ֆինանսավորման տրամադրման քաղաքականություններ			Տրամադրվել է (<< դրամ)	Չի տրամադրվել (<< դրամ)
		Սեռերի ներկայացվածություն ղեկավար մարմնի կազմում	Տարածքային ստորաբաժանումներ	Հետազոտություններ, գաղափարախոսություն		
1	Քաղաքացիական պայմանագիր	ոչ	այո	այո	53,661,800	53,661,800
2	Բարգավաճ Հայաստան	ոչ	ոչ	այո	15,133,200	20,177,600
3	Վերածնվող Հայաստան	ոչ	ոչ	այո	1,072,000	4,288,000
4	Հանրապետություն	այո	այո	այո	15,503,200	0
5	Հայ յեղափոխական դաշնակցություն	ոչ	այո	այո	30,500,000	30,500,000
Ընդամենը						108,627,400

Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում՝ 2024 թվականին տրամադրվող պետական նպատակային ֆինանսավորման գումարը, ըստ կուսակցությունների (ՀՀ դրամ)



Ինչ վերաբերում է պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործմանը, ապա 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» [սահմանադրական օրենքը](#), որի 1-ին հոդվածով փոփոխություն է կատարվել ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասում, որով սահմանվել է, որ կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 և 2023 թվականների համար տրամադրվում է ամբողջությամբ՝ առանց Օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման: Նման պայմաններում, պետական ֆինանսավորումը նվազեցնելու վերաբերյալ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքները որևէ կերպ չեն անդրադառնում կուսակցությունների 2023 թվականի համար տրամադրված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների վրա:

4.4 Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների

հրապարակում և ներկայացում

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:*

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակելու, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացնելու՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը: Ուսումնասիրության արդյունքում 2023 թվականի տարեկան հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակած կամ Հանձնաժողով չներկայացրած 32 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, որոնց արդյունքում 32 կուսակցությունների պաշտոնատար անձանցից 21-ի նկատմամբ կայացվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ, իսկ 11 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշումներ, ստորև նշված հիմքերից առնվազն երկուսի միաժամանակյա համադրությամբ՝ հետևյալ հիմքերով՝

1. Հակաիրավական վարքագիծը վարույթի մասնակցի կողմից դրսևորվել է առաջին անգամ:

2. Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Հանձնաժողով են ներկայացվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները:

3. 2023 թվականի ընթացքում կուսակցությունները ընթացիկ ֆինանսական գործունեություն չեն ծավալել:

Մեկ այլ վարույթի կարճման հիմք է հանդիսացել, բացի վերոնշյալ փաստական հանգամանքներից նաև այն հանգամանքը, որ կուսակցության պաշտոնատար անձի կողմից ներկայացվել է ապացույց առ այն, որ կուսակցությունը գտնվում է լուծարման գործընթացում:

Մեկ այլ վարույթով էլ Հանձնաժողովը վարույթի կարճման համար էական է գնահատել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը՝ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացվել են Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը, վարույթի մասնակցի

կողմից մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացված Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Կուսակցությունը ընթացիկ ֆինանսական գործունեություն չի ծավալել, միաժամանակ, թեև Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի («Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չիրապարակելը») 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ տվյալ հակաիրավական վարքագիծը վարույթի մասնակցի կողմից չի դրսևորվել առաջին անգամ, այնուամենայնիվ Հանձնաժողովն էական է համարել վարույթի մասնակցի կողմից Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետում հրապարակելուն և դա Հանձնաժողով ներկայացնելուն ուղղված գործողությունները, հաշվի առնելով պարտավորությունների կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքները, մասնավորապես՝ Հանձնաժողովն ուսումնասիրել է վարույթի մասնակցի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերը, որոնցով հավաստվել է, որ Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը Հանձնաժողով չներկայացնելը օրենքով սահմանված ժամկետում պայմանավորված է եղել վարույթի մասնակցի կամքից անկախ հանգամանքներից՝ առողջական խնդիրներով պայմանավորված բժշկական հաստատություն տեղափոխվելու պատճառով:

Միաժամանակ, վարչական տույժի կիրառումից հետո 21 կուսակցություններից 17-ը Հանձնաժողով են ներկայացրել կուսակցության տարեկան հաշվետվությունները, իսկ 4-ը չեն ներկայացրել: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ նշված 4 դեպքերում վարչական տույժ կիրառելու մասին որոշումները պատվիրակված նամակով ուղարկվել են կուսակցությունների պաշտոնատար անձանց և ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում հետադարձ ծանուցումը չստանալու հանգամանքով պայմանավորված՝ 4 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ կայացված վարչական տույժ կիրառելու մասին որոշումները տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի կարգավորումները: Վերոնշյալ 4 կուսակցություններից 1-ը ներկայացրել է պահանջվող հաշվետվությունը 2025 թվականին:

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

5.1 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի ապահովմանն ուղղված աշխատանքները

Հանձնաժողովը, նպատակ ունենալով կանխել բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց անձանց մուտքը պետական համակարգ, 2024 թվականի ընթացքում շարունակել է իրականացնել իր առանցքային գործառույթներից մեկը՝ դատաիրավական համակարգում պետական պաշտոնների հավակնոդ անձանց բարեվարքության ուսումնասիրությունը: Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներառված և ձեռքբերված տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով կազմել և իրավասու մարմին է ներկայացրել անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ:

2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթը: Նշված օրենքների փաթեթով զգալիորեն ընդլայնվեցին Հանձնաժողովի՝ բարեվարքության ուսումնասիրության առնչությամբ լիազորությունները: Մասնավորապես, վերոնշյալ օրենքների շրջանակներում տեղի ունեցավ ինչպես պաշտոնի խմբի ընդլայնում, մասնավորապես՝ ներդրվեց Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնոդ անձանց և Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնոդ թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության պահանջ, նախատեսվեց բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության ինստիտուտը:

Նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականի երկրորդ կիսամյակի սկզբին ձեռնամուխ եղավ բարեվարքության ուսումնասիրության գործընթացում էական նշանակություն ունեցող մի շարք իրավական

ակտերի ընդունմանը և վերը նշված օրենքներով նոր ներդրված կառուցակարգերի կիրարկմանը:

Մասնավորապես, 2024 թվականի հուլիսի 19-ին Հանձնաժողովի կողմից ընդունվեց «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշները և դրանցում ներառվող տվյալների մանրամասները սահմանելու մասին» [թիվ 04-Ն որոշումը](#), որում մանրամասն ներկայացվեցին [օրենքի](#) համապատասխան իրավակարգավորումներից բխող և բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում պահանջվող տվյալները:

Բացի այդ, հիմք ընդունելով [օրենքի](#) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Հանձնաժողովի նախկինում ունեցած պրակտիկան առ այն, որ բարեվարքության հարցաթերթիկ ներկայացնող անձինք գործընթացի շրջանակներում բախվում են լրացման կարգի հետ կապված ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային մի շարք խնդիրների՝ Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ին ընդունվեց «Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի և բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» [թիվ 04-Լ որոշումը](#), որով սահմանվեց հարցաթերթիկների լրացման և ներկայացման կարգը: Որոշման 2 հավելվածներով մանրամասն անդրադարձ է կատարվել հարցաթերթիկների բոլոր գլուխներին և դրանցում ներառվող տեղեկություններին:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի որոշումների հրապարակումն ապահովված է պաշտոնական տեղեկագրում և Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժնում:

Հատկանշական է, որ վերը նշված օրենքների ընդունման շրջանակներում «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 26.1-ին հոդվածով հստակ ամրագրվեցին այն սկզբունքները, որոնց առկայության կամ բացակայության պայմաններում Հանձնաժողովը հանգում է թեկնածուի (անձի) բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի եզրակացությանը: Նշված սկզբունքների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով նախկինում տրամադրված եզրակացությունները և դրանցում առկա գնահատականներն ու արձանագրումները՝ Հանձնաժողովի կողմից հաստատվեց Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանությունը (տես՝ Հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի թիվ [05-Լ որոշում](#)):

Մեթոդաբանության հաստատմամբ և հրապարակմամբ, բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պարտադիր պահանջ ունեցող անձանց համար կանխատեսելի դարձավ մեթոդաբանության մեջ առկա տվյալների և տեղեկությունների համատեքստում իրենց վերաբերելի տվյալների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից տրվող եզրակացությունը:

Միաժամանակ, բարեվարքության ուսումնասիրության գործընթացի կատարելագործման, ինչպես նաև հանրային հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով, Կառավարությունը ներկայումս ձեռնամուխ է եղել հետևյալ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնմանը.

- ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի գնահատման արդյունքներին համահունչ՝ ընդլայնել բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պարտավորություն ունեցող պաշտոնի խմբերը՝ ներառելով գործադիրում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց,
- բարեվարքության ուսումնասիրության գործընթացի հաշվետվողականության ապահովման նպատակով եզրակացությունների եզրափակիչ մասերը համապատասխան որոշումների կայացումից հետո դարձնել հրապարակային:

Միաժամանակ, Հանձնաժողովին վերապահված վերը նշված լիազորությունների շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև իրավասու ստորաբաժանման աշխատակիցների թվաքանակի ավելացմանը: Մասնավորապես, բարեվարքության ուսումնասիրության ենթակա անձանց թվի աննախադեպ ավելացման հանգամանքով պայմանավորված՝ Կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1210-Ա որոշմամբ վարչության աշխատակիցների թվաքանակը ավելացվեց 5-ով, իսկ հաստիքները Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով համալրվեցին 2024 թվականի նոյեմբեր ամսին: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովն առաջիկայում նախատեսում է թվայնացնել բարեվարքության ուսումնասիրության գործընթացը՝ ուսումնասիրության առանձնահատկություններով պայմանավորված՝ աշխատանքների զգալի մասը հնարավոր չի լինելու թվայնացման գործիքների միջոցով իրականացնել, ուստի, այս առումով հարկ է նշել, որ նույնիսկ ավելացված հաստիքների պայմաններում՝ նշված գործառույթի՝ սահմանված ժամկետներում իրականացման համար առկա են էական խոչընդոտներ: Հատկանշական է, որ բարեվարքության ուսումնասիրությունների գործընթացը ենթադրում է նաև մեծ ծանրաբեռնվածություն այլ պետական մարմինների և առևտրային բանկերի, ապառክվագրական ընկերությունների համար՝ հաշվի առնելով Թեկնածուների և վերջինների ընտանիքի անդամների վերաբերյալ հայցվող տեղեկատվության ծավալը, շրջանակը և սեղմ ժամկետները:

Վերը նշվածի համատեքստում՝ առաջարկվում է վերանայել ոլորտային օրենսդրական կարգավորումները՝ հնարավորության դեպքում սահմանելով միջանկյալ փուլ: Որպես օրինակ, դատավորների թեկնածուների հավակնորդների դեպքում Հանձնաժողովը բարեվարքության ուսումնասիրության առարկա է դարձնում բացառապես գրավոր փուլը հաղթահարած անձանց բարեվարքության հարցաթերթիկները, մինչդեռ դատախազների թեկնածուների դեպքում միջանկյալ փուլ առկա չէ, և գործնականում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ Հանձնաժողովը ուսումնասիրում է այն անձանց բարեվարքությունը, ովքեր մասնագիտական նվազագույն պահանջներին չեն բավարարում:


5.2 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը 2024 թվականի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով **336** անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

Ներկայացված թվով **336** եզրակացություններից՝ **252**-ը եղել են դրական, **36**-ը՝ բացասական, **41**-ը՝ դրական վերապահումով (մինչև ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ուժի մեջ է մտնելը (2024 թվականի մայիսի 17) այն դեպքերում, երբ անձի վերաբերյալ տվյալները բավարար չեն եղել բացասական եզրակացություն տրամադրելու համար, բայց նաև ռիսկային են եղել դրական եզրակացության տրամադրման տեսանկյունից՝ Հանձնաժողովը շարունակել է տրամադրել դրական՝ վերապահումով եզրակացություն): Թվով **7** անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:


Հանձնաժողովը 2024 թվականին իրականացված բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով գույքային դրության առնչությամբ ձևավորված հիմնավոր կասկածի հիման վրա Գլխավոր դատախազություն է ներկայացրել թվով 1 հաղորդում՝ գույքի ավելացման և կատարված ծախսերի՝ օրինական եկամուտներով հիմնավորվելու, ինչպես նաև Թեկնածուի կողմից կատարված գործարքների օրինականության առնչությամբ:

336 եզրակացություն



Ներկայացված եզրակացություններից՝


- 17-ը վերաբերել են **դատավորների թեկնածուների հավակնորդներին**,
- 33-ը՝ **Վերաքննիչ դատարաններում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 21-ը՝ **Վճռաբեկ դատարանում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 4-ը՝ **Բարձրագույն դատական խորհրդի անդամի** թեկնածուներին,
- 2-ը **Սահմանադրական դատարանի դատավորի** թեկնածուներին,
- 161-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,
- 57-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 22-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 16-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 1-ը՝ Քննչական կոմիտեի **նախագահի** թեկնածու,
- 2-ը՝ Քննչական կոմիտեի **նախագահի տեղակալի** թեկնածու:




5.2.1 Դատական համակարգում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ

Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 17 եզրակացություններից 11-ը եղել են դրական, որոնցից 5-ն ընդգրկվել են համապատասխան ցուցակում, 4-ը՝ դրական վերապահումով, որից 1-ը ընդգրկվել է համապատասխան ցուցակում, այնուհետև նշանակվել պաշտոնում, 1-ը՝ բացասական՝ նշանակում չի կատարվել: Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:


Դատավորների թեկնածուների հավակնորդներ



Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ ներկայացված բարեվարքության 33 եզրակացություններից 23-ը եղել են դրական, որոնցից ցուցակում ընդգրկվել է 15 թեկնածու՝ պաշտոնում նշանակվել են 3-ը, 4-ը՝ բացասական, թեկնածուներից 1-ն ընդգրկվել է ցուցակում, 3-ը՝ դրական՝ վերապահումով, թեկնածուներից 2-ն ընդգրկվել են առաջխաղացման ցուցակում, այնուհետև նշանակվել պաշտոնում: Թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, 3 թեկնածուներն էլ ընդգրկվել են ցուցակում:




Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 21 եզրակացություններից 13-ը եղել են դրական, թեկնածուներից 7-ը ընդգրկվել են ցուցակում, թվով 2 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 5-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 3-ը, այնուհետև 1 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 3-ը՝ դրական՝ վերապահումով, որոնցից թվով 1 թեկնածու ընդգրկվել է համապատասխան ցուցակում, այնուհետև նշանակվել է պաշտոնում:



Նշվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ 2024 թվականին դատական համակարգում բացասական եզրակացություն ստացած անձանցից միայն 1-ն է պաշտոնի նշանակվել, ինչը վկայում է նշված համակարգում բացասական եզրակացություններով պաշտոնի նշանակման դեպքերի զգալի նվազման մասին:

Հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների ոչ մեծ թվաքանակը, անձի նույնականացումը բացառելու նպատակով, արդյունքները ներկայացվում են ընդհանրացված.


Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 6 եզրակացություններից 5-ը եղել են դրական, որից 3-ը նշանակվել են պաշտոնում, թվով 1-ը դրական՝ վերապահումով, թեկնածուն նշանակվել է պաշտոնում:



5.2.2 Դատախազության համակարգում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ


Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 161 եզրակացություններից 115-ը եղել են դրական, որից 29-ը ընդգրկվել են համապատասխան ցուցակներում, ապա թվով 26-ը նշանակվել են պաշտոնում, 18-ը՝ բացասական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել, այնուհետև նշանակվել են պաշտոնում թվով 3-ը:

Թվով 26-ը եղել են դրական՝ վերապահումով, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են թվով 6-ը, այնուհետև թվով 5 թեկնածու նշանակվել է պաշտոնում, Թվով 2 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, որոնցից թվով 1 թեկնածու նշանակվել է պաշտոնում:



Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 57 եզրակացություններից 47-ը եղել են դրական, որից թվով 45-ը ընդգրկվել են համապատասխան ցուցակներում, այնուհետև թվով 44-ը նշանակվել են պաշտոնում, 6-ը՝ բացասական, թվով 5 թեկնածու ընդգրկվել են ցուցակներում, այնուհետև նշանակվել պաշտոնում, 4-ը՝ դրական՝ վերապահումով, որոնք ընդգրկվել են համապատասխան ցուցակում, այնուհետև նշանակվել են պաշտոնում:

Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուներ



Հատկանշական է, որ նախորդ տարվա համեմատ՝ բացասական եզրակացություններով նշանակումների թիվն աճել է.


Դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների դեպքում 11.8%-ով. (2023 թվականին կազմել է 4.76%, 2024-ին՝ 16.6%):

Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների դեպքում 33%-ով. (2023 թվականին կազմել է 50%, 2024-ին՝ 83%):

5.2.3 Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության ուսումնասիրության ցուցանիշներ


Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համարել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 16 եզրակացություններից 15-ը եղել են դրական, որից 13-ը նշանակվել են համապատասխան պաշտոններում, թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուները ընդգրկվել են ցուցակում:


Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուներ



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 22 եզրակացություններից 20-ը եղել են դրական, բոլոր թեկնածուները նշանակվել պաշտոնում, 2-ը՝ բացասական, թեկնածուները չեն նշանակվել պաշտոններում:

Օպերներ






Ամփոփելով վերը նշվածը՝ հարկ է արձանագրել, որ հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության բացասական եզրակացություն ստացած անձանց նշանակում չի արձանագրվել:

5.2.4 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ

Ինչպես արդեն նշվեց, 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված օրենքների փաթեթով ներդրվեց բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործընթացը, որի մեկնարկը տրվեց Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանցով: Նշված թիրախային խմբի առաջնահերթությունը պայմանավորված էր նաև «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II»-ի («Support to Justice Sector Reforms in Armenia: Phase II») ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված դրույթով առ այն, որ մինչև 2024 թվականի ավարտը Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 14 տոկոսը պետք է ենթարկվեին բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության:

Վերը նշվածի համատեքստում 2024 թվականի սեպտեմբերից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովն իրականացրել է Քննչական կոմիտեի թվով 119 գործող քննիչի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն (Քննչական կոմիտեի նախագահի 2024 թվականի օգոստոսի 1-ի թիվ 793-Ա հրամանի համաձայն՝ որպես առաջնահերթություն ընտրվել էին այն քննիչները, որոնք

ենթակա էին ատեստավորման, և որոնք հավակնում էին ընդգրկվել առաջխաղացման ցուցակներում), ինչի արդյունքում Քննչական կոմիտե է ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:





Ներկայացված **119** եզրակացություններից՝ **100**-ը եղել են դրական, **14**-ը բացասական, թվով **5** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում բացասական եզրակացություն ստացած ընդհանուր թվով **14** անձանց նկատմամբ նշանակված ծառայողական քննությունների շրջանակում՝ թվով **3**-ի վերաբերյալ արձանագրվել են առերևույթ հիմքեր, որոնք կարող էին հանգեցնել կարգապահական պատասխանատվության, սակայն վերջիններս իրենց անձնական դիմումների համաձայն ազատվել են զբաղեցրած պաշտոններից, ուստի այդ հիմքով վերջիններիս նկատմամբ ընթացող նախնական ուսումնասիրությունները դադարեցվել են: Թվով **10** անձանց վերաբերյալ եզրակացություններում նշված հանգամանքները պարզաբանվել են, նախնական ուսումնասիրությունը դադարեցվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառով: Թվով **1** թեկնածուի վերաբերյալ կիրառվել է «Նկատողություն» կարգապահական տույժը:

6. ԿՈՌՈՒՊՏԻԱՑԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

2024 թվականին Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում շարունակել է վարույթների իրականացումը: Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 778 վարույթներ: Մասնավորապես,



Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթներից 98-ը եզրափակվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ, իսկ մյուսները՝ բանավոր դիտողություն հայտարարելով և վարչական վարույթը կարճելով: Վարույթների մի մասը դեռ գտնվում են ընթացիկ փուլում:

Հանձնաժողովի կողմից 2023 և 2024 թվականներին իրականացված վարույթների համեմատական վերլուծության արդյունքում արձանագրվել է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում իրականացված վարույթների արդյունքային ցուցանիշների աճ՝ մոտ 6 անգամ ավելի ցուցանիշով: Մասնավորապես՝ 2023 թվականին իրականացվել է 137 վարույթ, իսկ 2024-ին՝ 778 վարույթ, ինչը հանդիսանում է Հանձնաժողովի արձագանքման արդյունավետության բարձրագույն ցուցանիշ: Հարկ է նշել, որ իրականացված վարույթների արդյունքում 2024 թվականի ընթացքում կիրառվել է ընդհանուր առմամբ 14,650,836 ՀՀ դրամի չափով վարչական տույժ, որից պետությանը **հատուցվել է ընդհանուր առմամբ՝ 11,286,167 ՀՀ դրամը**, : Կիրառված տույժերի և պետությանը հատուցված գումարների տարբերությունը դեռևս չի բռնագանձվել, քանի որ չեն լրացել հարկադիր կատարման ուղարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները: Հարկ է նշել նաև, որ նշված հատուցումներում ներառված են ինչպես 2024 թվականի ընթացքում վճարված, այնպես էլ մինչ սույն զեկույցի ներկայացման օրվա դրությամբ՝ 2025 թվականի ընթացքում վճարված գումարները:

Որպես հաշվետու ժամանակահատվածի արդյունք, հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդման հիման վրա հարուցված քրեական վարույթի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդման սուբյեկտ հանդիսացող նախկին պաշտոնատար անձի կողմից, որպես պետությանը պատճառված վնաս, **հատուցվել է 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ** որպես պետությանը պատճառված վնասը:

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով ՀՀ վարչական դատարանի կողմից քննության է առնվել թվով 14 դատական գործ, որոնցից 5 դատական գործով կայացվել է հայցադիմումով ներկայացված պահանջը մերժելու մասին դատական ակտ, 2 դատական գործով հայցադիմումով ներկայացված պահանջը բավարարվել է, իսկ 7 դատական գործերը դեռևս գտնվում են քննության փուլում:

7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հանրային կառավարման համակարգում թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը, օրինականության ապահովումը և կոռուպցիոն ռիսկերի արդյունավետ կառավարումը պահանջում են կոռուպցիոն ռիսկերի համապարփակ բացահայտում, վերլուծություն և գնահատում՝ կիրառելով միասնական չափորոշիչների և մոտեցումների վրա հիմնված մեթոդաբանություն: Նման համակարգային մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն գնահատել առկա ռիսկերը, այլև մշակել և ներդնել կանխարգելիչ միջոցառումներ, որոնք նպաստում են կոռուպցիոն դրսևորումների կանխմանը, դրանց հավանականության և ազդեցության նվազեցմանը կամ բացառմանը: Այս գործընթացի շարունակական իրականացումը և արդեն ներդրված միջոցառումների բարելավումը կարևոր դեր են խաղում բարեվարքության համակարգի ամրապնդման գործում:

2023 թվականին կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ Հանձնաժողովի աշխատանքները կենտրոնացել են միասնական մեթոդաբանության մշակման վրա, որը նպատակ ունի ապահովել կոռուպցիոն ռիսկերի համակարգված վերլուծության և գնահատման համար անհրաժեշտ գործնական և հստակ հիմքեր՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա:

2024 թվականին, մեթոդաբանության կիրառելիությունը փորձարկելու նպատակով, իրականացվել են պիլոտային գնահատումներ երեք կազմակերպություններում՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» (ԱՆԻՖ) ՓԲԸ, «Հայանտառ» ՊՈԱԿ, «Երևանի թիվ 119 մանկապարտեզ» ՀՈԱԿ: Գնահատումների արդյունքում արձանագրվել է անհրաժեշտություն՝ նշված կազմակերպություններում զարգացնելու բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության կարողությունները՝ համաձայն միջազգային ստանդարտների: Միաժամանակ, վերհանվել են խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային լուծումներ: Արձանագրված խնդիրներն ու բացերն ամփոփված են զեկույցում, որում անդրադարձ է կատարվել ինչպես առկա մարտահրավերներին, այնպես էլ միջազգային ստանդարտներին: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/3ENL5pz>:

Կազմակերպություններում իրականացված գնահատման արդյունքում բացահայտված ռիսկերը հիմնականում առնչվել են պետական մասնակցությամբ ընկերությունների գործարար բարեվարքության համակարգին, կառավարման մարմինների ձևավորմանը, ինչպես նաև վերջիններիս թափանցիկությանը և հաշվետվողականությանը: Այս համատեքստում առաջարկվել է նախևառաջ հստակեցնել պետական մասնակցությամբ ընկերությունների ձևավորման, դրանց գործունեության և կառավարման վերաբերյալ պետության քաղաքականությունը, ինչը հնարավորություն կտա ընդգծել, թե որ

ընկերություններն են հետաքրքրություն ներկայացնում պետության մասնակցության տեսանկյունից, ինչպես նաև սահմանել սկզբունքներ՝ դրանց գործունեության, կառավարման և հաշվետվողականության ապահովման նպատակով: Բացի այդ, գնահատման արդյունքների հիման վրա Հանձնաժողովի կողմից առաջարկվել է.

1. Խթանել պետական մասնակցությամբ ընկերություններում գործարար բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի գնահատման կառուցակարգերի ներդրումը.

➤ ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի կարգավորումները պարտադիր դարձնել որոշակի չափանիշների բավարարող պետական մասնակցությամբ ընկերությունների համար.

➤ Ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ.

➤ Մշակել վարքագծի կանոններ, որոնք կբովանդակեն դրույթներ շահերի բախման կանխարգելման և կառավարման, նվերների և հյուրընկալության, քաղաքական հանգանակությունների, բարեգործական նվիրատվությունների և հովանավորչության վերաբերյալ.

➤ Ներդնել ներքին ազդարարման և ներքին հսկողության համակարգ:

2. Ապահովել պետական մասնակցությամբ ընկերությունների արդյունավետ կառավարումը և գործառնական ինքնավարությունը.

➤ Սահմանել տնօրենների խորհրդի անդամների ձևավորման բաց ընթացակարգ՝ հավասար պայմաններ ապահովելով բոլոր հետաքրքրված անձանց համար.

➤ Սահմանել տնօրենների խորհրդի անդամների նշանակման կամ ընտրության չափանիշներ, որոնք կվերաբերեն նրանց մասնագիտական կրթությանը և փորձին, ինչպես նաև կպարունակեն թեկնածուների բարեվարքության վերաբերյալ պահանջներ.

➤ Ապահովել տնօրենների խորհրդի կազմում բավարար թվող անկախ անդամների ընդգրկումը և խորհրդի նախագահումը անկախ անդամի կողմից.

➤ Ապահովել խորհրդի անդամների պատշաճ՝ շուկայում գործող չափանիշներին համահունչ վարձատրություն՝ բարձր մասնագիտական և առաջնորդական որակներով օժտված պրոֆեսիոնալ խորհրդի ձևավորման նպատակով:


3. Ապահովել պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ.

➤ Ստեղծել հաշվետվությունների արդյունավետ համակարգեր, որոնք թույլ կտան պետությանը կանոնավոր կերպով գնահատել պետական մասնակցությամբ ընկերությունների կատարողականը, ինչպես նաև վերահսկել դրանց համապատասխանությունը կորպորատիվ կառավարման ստանդարտներին.

➤ Ապահովել միջազգային ստանդարտներին համապատասխան ծավալի և շրջանակի տեղեկատվության հրապարակայնությունը (խորհրդի անդամների վերաբերյալ տվյալներ, վարձատրության քաղաքականություն, կորպորատիվ կառավարման զեկույց և այլն).

➤ Պետության կողմից ուղիղ որոշումների կայացման միջոցով վերահսկողությունից անցում կատարել բարձր հաշվետվողականության միջոցով վերահսկողության մոդելին, ինչը ենթադրում է գործունեության մոնիթորինգի մեխանիզմների ներդրում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական ոլորտներում հաշվետվողականության ապահովման նպատակով:

Պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններում բացահայտված ռիսկերի կառավարման համատեքստում Հանձնաժողովն ընդգծել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ գլխի կարգավորումներից բխող՝ հանրային բարեվարքության համակարգի ներդրման, հրապարակման ենթակա տեղեկատվության շրջանակի ընդլայնման, անձնակազմի հավաքագրման, կատարողականի գնահատման և վարձատրության միասնական ու թափանցիկ ընթացակարգերի սահմանման անհրաժեշտությունը:



2024 թվականին Հանձնաժողովը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացրել է կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում: Գնահատման նպատակն էր բացահայտել համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը՝ ներառելով իրավական կարգավորումների բացերը, չկանոնակարգված հարաբերությունները, ոչ համակարգային լուծումները, առկա պրակտիկաները և կոռուպցիոն ընկալումները: Բացի այդ, վերլուծվել են բացահայտված ռիսկերի հիմքում

ընկած խորքային պատճառներն ու գործոնները՝ նպաստելով համակարգի արդյունավետ գործառնությանը խոչընդոտող կոռուպցիոն ռիսկերի զսպմանը:

Գնահատման շրջանակում ձևավորվել է աշխատանքային խումբ՝ կազմված Հանձնաժողովի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներից: Գնահատման առարկան ընդգրկել է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի հետևյալ գործընթացները՝ ուղեգրում, ամփոփագրի մշակում, ֆունկցիոնալության գնահատում, ծառայությունների անհատական ծրագրերի մշակում և իրականացում, բողոքարկում, երրորդ կողմերի մասնակցություն, ֆունկցիոնալության գնահատման համակարգի թվայնացում, առանձին խմբերի անձանց ֆունկցիոնալության գնահատում, անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ընդհանուր արդյունավետություն:

Գնահատման առաջին փուլում բացահայտված խնդիրների խորքային պատճառների վերլուծության և արդյունավետ լուծումների մշակման նպատակով Հանձնաժողովը գնահատման երկրորդ փուլի իրականացումը պատվիրակել է հետազոտական կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի աջակցությամբ: Արդյունքում «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցությամբ անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի շահառուների, պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ իրականացվել են անհատական ու խմբային հարցազրույցներ և ֆոկլուս խմբային քննարկումներ, որոնց արդյունքներն ամփոփվել են համապարփակ զեկույցի մշակմամբ:

Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատում



Գնահատման արդյունքում բացահայտված առավել բարձր ռիսկերը վերաբերում են հիմնականում ուղեգրման գործընթացին և ծառայությունների անհատական ծրագրի (ՇԱԾ) մշակմանը: Մասամբ դրական գնահատականները վերաբերում են ամփոփագրի մշակման փուլին, Ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովային փուլին և էլեկտրոնային համակարգի գործառնությանը: Գնահատման ընթացքում վերհանված հիմնական խնդիրներն ունեն իրավական համատեքստ և պահանջում են իրավական մակարդակում լուծումներ, իսկ որոշ դեպքերում արձանագրվել է շահառուների և նաև ուղեգրող բժիշկների շրջանում Ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի գործառնության սկզբունքների վերաբերյալ իրազեկման խիստ պակաս, ինչը ենթադրում է նշված խմբերում իրազեկման համակարգային միջոցառումների իրականացում: Ստորև պատկերված աղյուսակում ներկայացվում են ցածր, միջին և բարձր ռիսկեր պարունակող գործընթացների և ռիսկերի նկարագրության օրինակներ:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ



ՈՒՂԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

«Կայուն խանգարում» հասկացությունն ուղեգրման գործընթացում չունի միանշանակ և միատեսակ կիրառում, ուստի այդ ձևակերպումը կարող է օգտագործվել հայեցողական կերպով:



ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատման նոր համակարգը մեծամասամբ թույլ է տալիս ավելի համարժեք նույնականացնել շահառուներին (գնահատել շահառուի ֆունկցիոնալությունը համարժեքորեն):



ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Լրացուցիչ հետազոտության ուղեգրման մանրամասները դեռ ամբողջովին մշակված չեն, իսկ լրացուցիչ հետազոտություն անցնելու ընթացակարգը բարդեցված է, որը դժվարացնում է նաև պատշաճ տեղեկանալու հնարավորությունը:



ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ֆունկցիոնալության գնահատման համակարգի բարեփոխումները զգալիորեն նվազեցրել են կոռուպցիոն ռիսկերը, և դրանց լիարժեք հաղթահարման համար պահանջվում է համակարգի գործառնության և շահառուների իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության և հասանելիության ապահովում:



ԾԱԾ-Ի ՄԵԾԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Անհատական, խմբային հարցազրույցների և ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները հստակ և միանշանակ պատկերացում չունեն առ այն, թե իրականացվում է, արդյոք, ԾԱԾ-ի իրագործման ընթացքի վերաբերյալ մշտադիտարկում:

Սյունակների գունային երանգներն ունեն հետևյալ իմաստային բովանդակությունը. կանաչը համապատասխանում է ցածր, դեղինը՝ միջին, կարմիրը՝ բարձր ռիսկեր պարունակող գնահատականներին

Կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման արդյունքներն ամփոփվել են համապարփակ զեկույցի և ոլորտային հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի մշակմամբ, որոնք հասանելի են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/4cg48Ws>:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործառնության իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների սահմանման նպատակով 2024 թվականին Հանձնաժողովը մշակել և Արդարադատության նախարարություն է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ 2023-2026 թթ. հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 1.9-րդ և 4.3-րդ գործողությունների պահանջները:

Նախագծերի ընդունման և Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնման արդյունքում ակնկալվում է ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրա հիման վրա վարկանիշավորման միասնական համակարգ, որը կապահովի ոչ միայն առկա

հակակոռուպցիոն և կառավարման մեխանիզմների բազմակողմանի գնահատում, այլև կլիթանի բարեփոխումների իրականացումը և կոռուպցիոն ռիսկերի համակարգային նվազեցումը պետական և համայնքային կառույցներում:

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

8.1 Հակակոռուպցիոն կրթություն

Հանձնաժողովը, կարևորելով կոռուպցիայի կանխարգելման համատեքստում հակակոռուպցիոն կրթության և հասարակության շրջանակներում հակակոռուպցիոն գիտակցության խորը սերմանումը, հաշվետու ժամանակահատվածում ձեռնամուխ է եղել մի շարք միջոցառումների՝ վերապատրաստումների, իրազեկման արշավների, հանրային ծառայողների, հիմնական և ավագ դպրոցների աշակերտների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների և սովորողների, բուհերի դասախոսների և ուսանողների, ինչպես նաև դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների համար դասընթացների իրականացմանը, կազմակերպել է աշխատաժողովներ՝ ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ և այլն: Այսպես.


- **Հանրային ծառայողներ** - Վերապատրաստման դասընթացներ և իրազեկման միջոցառումներ են անցկացվել ավելի քան 900 հանրային ծառայողների շրջանում: Մասնավորապես, վերապատրաստումները վերաբերել են հիմնականում Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների [մեկնաբանությունների ուղեցույցի կիրառմանը](#), [բարեվարքության համակարգի տարրերին](#), [հայտարարագրման համակարգին](#): 2024 թվականի հունիսի 19-21-ն Ազգային ժողովի աշխատակազմի նախաձեռնությամբ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի աջակցությամբ կազմակերպել է «Բարեվարքության համակարգը հանրային ծառայությունում» թեմայով վերապատրաստման դասընթաց՝ միտված ԱԺ աշխատակազմի պետական ծառայողների կարողությունների զարգացմանը: Վերապատրաստման շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչը Խորհրդարանի աշխատակազմին ներկայացրել է բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը և Հանձնաժողովի գործառնությունները: Վերապատրաստմանը մասնակցել են ԱԺ աշխատակազմի շուրջ 40 ծառայողներ:

Հանրային ծառայողների շրջանում, առաջին անգամ կազմակերպվել է «Կանխարգելիչ կոռուպցիան» խաղ-մրցույթը՝ «Կորիզ» կրթական ծրագրի հետ համագործակցությամբ, որին մասնակցել են շուրջ 330 հանրային ծառայողներ՝ ՀՀ տարբեր պետական մարմիններից:

Խաղ-մրցույթի նպատակն էր ամրապնդել և բարելավել հանրային ծառայողների գիտելիքները վարքագծի կանոնների և բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ: Ուսուցման գործընթացն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով այն անցկացվել է խաղայնացման եղանակով:

Խաղ-մրցույթի ավարտից հետո, արդյունքների հիման վրա, կազմվել են վիճակագրական տվյալներ՝ գիտելիքների և գրանցված առաջընթացի վերաբերյալ: Այդ տվյալները հնարավորություն կտան հետագայում ավելի թիրախային դարձնել վերապատրաստման դասընթացների ընթացքում մատուցվող թեմաների ընտրությունը: Խաղի ընթացքում առավելագույն հավասար միավորներ հավաքած մասնակիցներին Հանձնաժողովի կողմից շնորհվել են խրախուսական մրցանակներ, իսկ առաջին երեք պատվավոր հորիզոնականները զբաղեցրած մասնակիցներին՝ հատուկ մրցանակներ:


Ստորև, ներկայացված են խաղ-մրցույթի ավարտից հետո, արդյունքների հիման վրա կազմված վիճակագրական տվյալները՝ գիտելիքների և գրանցված առաջընթացի վերաբերյալ:



Տվյալները վկայում են, որ խաղայնացումն ապահովել է միջինում 9,43 տոկոսի աճ, ինչը ցույց է տալիս այս մեթոդի արդյունավետությունը: Այս ցուցանիշը կարող է կարևոր չափանիշ համարվել կրթական միջամտությունների արդյունավետության գնահատման հարցում:

Բարելավման ցուցանիշներն ըստ թեմաների

Ընդհանուր արդյունքները վկայում են, որ մասնակիցները բարելավել են իրենց արդյունքները հետևյալ կերպ՝



Թեմա	Առաջին խաղ Բնական պատ	Վերջին խաղ Բնական պատ	Բարելավում
Ամիսամատուցելություն	73.4%	81.8%	11.4%
Վարձազեղի սկզբունքներ	72.9%	81.7%	12.1%
Ըստեղծի բախում	80.4%	86.5%	7.6%
Նվերներ	68.5%	79.4%	15.9%
Պատրաստի ծառայություն	82.4%	87.9%	6.7%

Վերջնական
Վերլուծված տվյալներն արձանագրում են այն թեմաները, որոնք արձանագրվել են ամենամեծ բարելավման արդյունքները, հատկապես՝ «Նվերներ» (15.9% բարելավում), ինչը ցույց է տալիս այս թեմայի նկատմամբ մասնակիցների ինֆորմացված փնտրումը ամբողջությամբ:

Վերլուծված տվյալները բացահայտում են այն թեմաները, որտեղ արձանագրվել են բարելավման ամենաբարձր արդյունքները, մասնավորապես՝ «Նվերներ» բաժինը (15,9 տոկոս բարելավում), ինչը ցույց է տալիս այս թեմայի նկատմամբ մասնակիցների տեղեկացված լինելու աճը:

Հաշվետու ժամանակաշրջանում առաջին անգամ կազմակերպվել է նաև «Կորպորատիվ կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» [աշխատաժողովը](#), որն իրականացվել էր Կորպորատիվ կառավարման կենտրոնի, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի, ԱՄՆ առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությամբ: Աշխատաժողովը նպատակ ուներ ծառայել որպես հարթակ, որի միջոցով մասնակիցները կձանոթանային կորպորատիվ կառավարման լավագույն պրակտիկաներին, կվերլուծեին ՀՀ պետական մասնակցությամբ ընկերությունների կորպորատիվ կառավարմանը վերաբերելի խնդիրները և մարտահրավերները, ինչը հնարավորություն կտա ընկերություններում ներդնել ժամանակակից տնտեսական մարտահրավերներին և հանրային սպասելիքներին համահունչ՝ ավելի կայուն, թափանցիկ և պատասխանատու կառավարման մոդելներ: Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և փորձագիտական շրջանակի ներկայացուցիչներ:

Հարկ է նշել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով


Հանձնաժողովը 2024 թվականին սկսել էր էլեկտրոնային ուսուցման հարթակի ստեղծմանն ուղղված աշխատանքները, որն արդեն գործողի վել է 2025 թվականի ապրիլի 21-ից (մանրամասները՝ «Հանձնաժողովի գործառնությունների թվայնացման աշխատանքները» բաժնում):

- **Մանկավարժներ** - ԵՄ Թվինինգ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշակված հակակոռուպցիոն կրթության դասավանդման մեթոդների վերաբերյալ մշակված նյութերի գործնական փորձարկման նպատակով՝ իրականացվել են «Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածությունը և վերջինիս կանխարգելումը հանրակրթության միջոցով» խորագրով աշխատաժողովները: Հանդիպումներին մասնակցել են թվով 64 մանկավարժներ՝ ՀՀ մարզերի և ք. Երևանի ուս. հաստատություններից: Այս անգամ՝ որպես բանախոսներ հանդես են եկել Ծրագրի շրջանակներում վերապատրաստում անցած մանկավարժները: «Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով իրազեկման հանդիպումներ են կազմակերպվել շուրջ 200 մանկավարժների և ծնողների հետ:
- **Դասախոսներ** - Հանձնաժողովի աշխատակիցների և Ծրագրի շրջանակներում ներգրավված միջազգային փորձագետների կողմից մշակվել են «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական ոլորտում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով բուհական մոդուլները՝ նախատեսված բուհերի դասախոսների համար, ինչպես նաև իրականացվել վերապատրաստման [դասընթաց](#): Մշակված մոդուլները տրամադրվել են ԿԳՄՍ նախարարություն և ՀՀ ԲՈԻՀ-եր: Հայաստանյան 3 ԲՈԻՀ-եր՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն իսկ հայտնել են վերոնշյալ մոդուլների որոշ թեմաներ իրենց ուսումնական ծրագրերում ներառելու մասին: Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստման դասընթացներ են անցկացվել բուհերի շուրջ 31 դասախոսների հետ:
- **Երիտասարդներ** - Կարևորելով երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ Հանձնաժողովի կողմից մշակվել և իրականացվել են «Դարձիր փոփոխության առաջնորդ» կամ «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրերով ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, որոնց մասնակցել են թվով 139 ուսանողներ և 522 աշակերտներ
- **ԶԼՄ և ՔՀԿ** - «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով աշխատաժողովներ են կազմակերպվել 23 ԶԼՄ և 21 ՔՀԿ ներկայացուցիչների հետ: Հակակոռուպցիոն կրթության շրջանակներում կարևորելով ՔՀԿ և ԶԼՄ

ներկայացուցիչների դերը՝ նմանատիպ աշխատաժողովները կրելու են շարունակական բնույթ:

- **ՄԿՈԻ ոլորտ** - Հանձնաժողովը, որպես ռազմավարության 3-րդ ռազմավարական նպատակի 3.5 գործողության համակատարող, նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագրերի ներդրման նպատակով՝ մշակել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈԻ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկի նախագիծը: Ձեռնարկը փորձարկվել է ՄԿՈԻ ոլորտի [դասավանդողների](#), [տնօրենների](#) և [փոխտնօրենների](#) համար կազմակերպված աշխատաժողովների ժամանակ:

Ստորև ներկայացվում են համեմատական թվային տվյալներ 2022-2024 թվականներին Հանձնաժողովի կողմից իրականացված վերապատրաստումների և դասընթացների մասնակիցների քանակի վերաբերյալ.



Ի կատարումն 2023-2026թթ Ռազմավարության **3.12** գործողության՝ Հանձնաժողովը, 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 07-Լ որոշմամբ հաստատվել է [«Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաշարը»](#):

Ուսումնասիրության մեկնարկը տրվել էր 2024 թվականի նոյեմբերին, իսկ արդյունքները նախատեսվում էր ամփոփել 2025 թվականի նոյեմբերին, սակայն ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսական աջակցության կասեցման պատճառով՝ գործընթացը 2025 թվականի հունվարից ևս կասեցվել է:

Ռազմավարության **3.14** գործողությամբ սահմանված է. «Հզորացնել ՔՀԿ-ների ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդհայթայթման իրականացման նպատակով»: Հարկ է նշել, որ գործողության ամբողջական կատարումը Հանձնաժողովի իրավասությունների տիրույթում չէ՝ հաշվի առնելով, որ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման կարողությունների զարգացումը Հանձնաժողովի գործառնությունների շրջանակում չի գտնվում և սույն հարցը վերապատրաստումների շրջանակներում ենթակա է հասցեագրման համապատասխան մասնագետների կամ փորձագետների: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը պայմանավորվածություն է ձեռք բերել գործողությունն իրականացնել ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի հետ համագործակցությամբ: Հաշվետու ժամանակահատվածում, ԱՄՆ ՄԶԳ գործընկերների հետ քննարկվել են թիրախները, տրամադրվել են Հանձնաժողովի կանխարգելման մանդատի շրջանակներում առաջարկվող վերապատրաստման թեմաները: ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի բարեվարքության ծրագիրը նախագծել և Հանձնաժողովի հաստատման է ներկայացրել ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար կազմակերպվող մրցույթի հայտարարությունը, որը հաստատվել է Հանձնաժողովի կողմից: Հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել է հաղթող կազմակերպություն, որը 2025 թվականից կմեկնարկեր հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագիրը՝ ներառելով նաև ֆոնդհայթայթման մեխանիզմները: Սակայն, նորից, գործընթացը կասեցված է՝ վերոգրյալով պայմանավորված:


8.2 Հանրային իրազեկվածության բարձրացում, հաղորդակցություն


2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է հանրային իրազեկման արշավների, միջոցառումների իրականացումը՝ ուղղված կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորմանը և հաշվետվողականության ամրապնդմանը՝ սերտ համագործակցելով լրատվամիջոցների հետ, կազմակերպել մի շարք հարցազրույցներ, քննարկումներ:

Հանրային իրազեկման ծրագրերի շրջանակներում ավելի լայն զանգվածներ ներգրավվելու նպատակով՝ Հանձնաժողովը՝ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ, մշակել է Հանձնաժողովի դերի և կարևորության բարձրացման


ուղղված տեսանյութեր, ինֆոգրաֆիկաներ, ստատիկ վիզուալներ, որոնց ընդհանուր դիտումների քանակը սոցցանցերում և հեռուստատեսությամբ (գովազդի միջոցով) կազմել է 8.289.529: Հանձնաժողովը պատրաստել է նաև կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ թվով 7 կրթական/ուսուցողական հոլովակներ, որոնք ուղղված են հանրային ծառայողների և սովորողների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական կայքէջով և սոցիալական էջերով կատարված հրապարակումների թվային տվյալների վերաբերյալ գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.





Ստորև ներկայացված են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում 2022-2024 թթ.-ի հրապարակումների վերաբերյալ համեմատական թվային տվյալներ:



2024 թվականին իրազեկման արշավների շրջանակներում, Հանձնաժողովն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև «Համախմբենք ուժերը՝ կանխենք կոռուպցիան» համապետական մեկամսյա իրազեկման արշավին, որը մեկնարկել էր «Երիտասարդներն ընդդեմ կոռուպցիայի» [մարաթոնով](#) և ավարտվել Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը՝ դեկտեմբերի 9-ին: Համապետական արշավի արդյունքներն ամփոփվել են «Կոռուպցիայի դեմ պայքարի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները» խորագրով [համաժողովին](#), որի ընթացքում ներկայացվել են Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներն ու ձեռքբերումները, առկա մարտահրավերները և դրանց դիմակայելու հիմնական ուղղությունները: Համապետական մեկամսյա իրազեկման արշավի ընթացքում կազմակերպվել է նաև «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ», որի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են մի շարք միջոցառումների:

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Հանձնաժողովը՝ պետության կողմից որդեգրած քաղաքականությանը հետևելով, շարունակել է հաշվետու տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության թվայնացման աշխատանքները:

2023 թվականի աշխատանքային գործունեության ընթացքում գործարկվել էր Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգը (այսուհետ՝ Համակարգ), որի բարելավման աշխատանքները շարունակվել են ամբողջ 2024 թվականի ընթացքում: Հաշվետու տարվա ընթացքում ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը:

Հանձնաժողովի գործունեության նախորդ տարիների ընթացքում աշխատանքներ են տարվել նվերների հաշվառման ռեեստրի կառուցման ուղղությամբ, որի վերաբերյալ աշխատանքները շարունակվել են 2024 թվականին և մեկնարկել են նվերների ռեեստրի կառուցման աշխատանքները:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը գործարկել է նաև իր նոր պաշտոնական կայքէջը, ինչպես նաև ակտիվ աշխատանքներ է տարել էլեկտրոնային ուսուցման հարթակի ստեղծման ուղղությամբ:

9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

Հաշվետու տարվա ընթացքում Համակարգի բարելավման աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվել Համակարգի որոշ տարրերի ավտոմատացմանը, որոնք նվազագույնի է հասցնում հայտարարագրման գործընթացում անզգուշության արդյունքում սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը: Մասնավորապես՝ ինտեգրվել են ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ ՆԳՆ ճանապարհային ոստիկանության տվյալների շտեմարանները, ինչի շնորհիվ համապատասխան տվյալները ինքնաշխատ կերպով արտացոլվում են հայտարարագրերում, ավտոմատացվել է հայտարարագրերում տվյալների փոփոխության վերաբերյալ դիմումների ներկայացման գործընթացը: Նշված դիմումները ներկայացվում են Համակարգի միջոցով, իսկ դրանց ամբողջ ընթացքն ապահովվում է Համակարգում համապատասխան գործողությունների և դրանցից բխող ավտոմատացված ծանուցումների կիրառությամբ:

Հարկ է նշել, որ Հաշվետվությունների համակարգի կատարելագործման շնորհիվ հնարավոր է գեներացնել ցանկացած բնույթի հաշվետվություններ: Համակարգում ակտիվացվել է նաև հայտարարագրերում փոփոխություններ կատարելու

ֆունկցիոնալությունը, ինչի արդյունքում հնարավոր է դարձել ավելի քան 300 ուղղման ղիմումներում նշված ուղղումների կատարումը:

Բացի այդ, տեխնիկական բարելավումները հնարավորություն են տվել արտահանել հայտարարագրերի հրապարակային տվյալների ամբողջական փաթեթը:

9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ

2024 թվականին Համակարգում ներդրվել և գործարկվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը: Նշված բաղադրիչը հնարավորություն է տալիս միատեսակ, ստանդարտացված, մեքենայական ուսուցման գործիքների համար ընթեռնելի եղանակով հավաքագրել տվյալները: Հնարավորություն կա նաև գեներացնել ավտոմատացված հաշվետվություններ, իրականացնել թվային վերլուծություններ և վարքագծային կանխատեսումներ:

Հանձնաժողովը նախաձեռնել է նաև 2021 թվականից ի վեր ներկայացված հաշվետվությունների ներբեռնումը նոր հարթակ՝ դրանց նկատմամբ առկա և նախատեսվող թվային լուծումները կիրառելու նպատակով:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում ներդրել և գործարկել է Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ էլեկտրոնային նոր համակարգը, ինչի արդյունքում Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերը, արդեն իսկ ներկայացվում են նոր հարթակի միջոցով:

9.3 Նվերների հաշվառման ռեեստր

Հաշվետու տարում ավարտին է հասցվել նվերների ռեեստրի կառուցման աշխատանքների համար՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից հայտարարված մրցույթը և մեկնարկել են նվերների ռեեստրի կառուցման աշխատանքները մրցույթում հաղթող ճանաչված Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմզ ընկերության հետ:

Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրը նախատեսված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված՝ 40.000 ՀՀ դրամը գերազանցող, ինչպես նաև նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում պարբերաբար (հինգ և ավելի անգամ) ստացված նվերների գրանցման և հաշվառման համար:


Պայմանագրով նախատեսվում է համակարգի կառուցումն ավարտին հասցնել 2025 թվականի առաջին կիսամյակում, սակայն ԱՄՆ ՄԶԳ ընթացիկ ծրագրերի կասեցմամբ պայմանավորված՝ սույն ծրագիրը ևս կասեցված է:

9.4 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայք

Հանձնաժողովը գործարկել է իր նոր պաշտոնական կայքէջը, որը դարձել է ավելի կիրառելի և համապատասխան ժամանակակից միտումներին՝ www.cpcarmenia.am: Նոր կայքը օգտատերի համար առավել դասակարգված է, իսկ Հանձնաժողովի կողմից հրապարակվող տեղեկությունը՝ մատչելի և հասանելի:


Կայքը հնարավորություն է տալիս բարձրացնելու Հանձնաժողովի հանրային հաշվետվողականության, թափանցիկության մակարդակը:

- Կայքում առանձնացված են Հանձնաժողովի կողմից վարվող ռեեստրերի, Հանձնաժողովի գործառույթներին վերաբերելի էլեկտրոնային համակարգեր մուտք գործելու և հակակոռուպցիոն կրթության համար նախատեսված հատուկ բաժիններ:



Կայքը համապատասխանում է պետական մարմինների կայքերին ներկայացվող պահանջներին: Առանձին բաժիններ են նախատեսվել Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումների համար: Նոր կայքում Հանձնաժողովի որոշումներն ու եզրակացությունները հասանելի են ըստ վարույթների տեսակների, առկա են որոնման առավել հեշտացված լուծումներ:

- Հանձնաժողովի նիստերի համար ևս առանձնացվել է կայքի հատուկ տարածք, որտեղ հրապարակվում են նիստերի օրակարգերը, ժամանակացույցերը և արձանագրությունները:



9.5 Կրթական էլեկտրոնային համակարգ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականին ակտիվ աշխատանքներ է տարել էլեկտրոնային ուսուցման հարթակի ստեղծման ուղղությամբ:

Հանձնաժողովը ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ դեռ նախորդ կիսամյակում սկսել է կրթական առցանց հարթակի կառուցման նախապատրաստական աշխատանքները: Արդեն 2024 թվականի օգոստոսից մեկնարկել են հարթակի կառուցման աշխատանքները:

- Կրթական հարթակը ծառայելու է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն:

➤ Ուսուցման հարթակն ունի նաև «Գրադարան» բաժին, որտեղ գետեղված են ոլորտային կարևոր և օգտակար միջազգային և տեղական փաստաթղթեր, զեկույցներ ու որոշումներ, կանոնագրքեր, ընթերցանության այլ նյութեր:

Հարթակը դասընթացներ է նախատեսում ոչ միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այլև ոլորտով հետաքրքրվող ցանկացած տարիքային խմբի և մասնագիտության անձանց՝ հանրության լայն շերտերի համար: Դասընթացների բովանդակությունը մշակվում է հակակոռուպցիոն ոլորտի միջազգային լավագույն օրինակների հիման վրա՝ թույլ տալով օգտագործողին գիտելիքներ ստանալ ոչ միայն հայաստանյան պրակտիկայի, այլև միջազգային փորձի վերաբերյալ: Դասընթացները հաճեցած են ոչ միայն ընթերցանության նյութերով, այլև ինտերակտիվ խաղերով, դիդակտիկ նյութերով, հարցումներով և ուսուցողական հոլովակներով:

Ուսուցման հարթակը գործարկվել է 2025 թվականի ապրիլի 21-ին, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարթակի ստեղծմանն ուղղված աշխատանքների գերակշիռ մասն իրականացվել է 2024 թվականին, տվյալները ներկայացվում են սույն հաղորդմամբ:

2025 թվականի առաջին եռամսյակի դրությամբ կրթական հարթակում արդեն իսկ հասանելի են 5 թեմատիկ դասընթացներ, որոնք մշակված են հանրային ծառայողների, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար և ներառում են բարեվարքության համակարգի տարրերի, կոռուպցիոն ռիսկերի, կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության, ազդարարման, հանրային գնումներում ռիսկերի նվազեցման և կոռուպցիայի կանխարգելման այլ գործիքների վերաբերյալ կրթական մոդուլներ:

Հարթակում այժմ հասանելի են հետևյալ խորագրերով դասընթացները՝

1. *«Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները»,*
2. *«Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար»,*
3. *«Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում»,*
4. *«Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում»,*
5. *«Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր»:*




Գլխավոր
 Ղապընթացներ
 Գրադարան
 Մեր Մասին
 Կապ Մեզ Հետ

Հայերեն



Կոռուպցիա

Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող...

10 Մասնակից



Կոռուպցիա

Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում

8 Մասնակից



Բարեվարչություն

Գործարար բարեվարչությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական...

9 Մասնակից



Կոռուպցիա

Կանխարգելման հիմնադրույթները

9 Մասնակից



Բարեվարչություն

Շահերի քախումը որպես բարեվարչության համակարգի տարր

7 Մասնակից

Հանձնաժողովը նախատեսում է ընդլայնել հարթակում հասանելի դասընթացների շրջանակը, ինչի շուրջ զուգահեռաբար քննարկումներ են տարվում հանրային իշխանության տաբեր մարմինների հետ՝ ոլորտային-թիրախային դասընթացների համատեղ մշակման համար՝ թիրախային թեմաների համատեղ վերլուծության, բովանդակության մշակման գործում մասնագիտական փորձի և ներուժի ներգրավման միջոցով:

Էլեկտրոնային ուսուցման հարթակը գործում է հետևյալ հղումով՝ <https://elearning.cpcarmenia.am/>:

Հանձնաժողովը հետամուտ է շարունակելու գործառույթների թվայնացման ռազմավարությունը՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով կանխարգելիչ մանդատի արդյունավետության բարձրացման և այն առավել թիրախային դարձնելու նպատակով: Մասնավորապես, նախատեսվում է մեկնարկել հետևյալ ծրագրերը.

- Հանձնաժողովի էլեկտրոնային հարթակի անցում ամպային միջավայր.
- Բարեվարչության ուսումնասիրության հարցաթերթիկների թվայնացում.
- Հանձնաժողովի ներքին գործառնությունների կառավարման համակարգի ներդրում, որը կապահովի Հանձնաժողովի ստորաբաժանումների միջև և դրանց ներսում համակարգված փոխգործակցություն՝ ներառյալ գործերի կառավարում, փաստաթղթաշրջանառություն, կատարողականի գնահատում և արխիվացում.
- Ավտոմատացված վերլուծությունների, կարմիր դրոշակների հարթակի գործարկում, որը հնարավորություն կտա կոռուպցիոն ռիսկերը դուրս բերել թե՛ բանաձևային

ալգորիթմների, թե՛ արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքների կիրառմամբ:

Հանձնաժողովի 2024 թվականի թվայնացման աշխատանքները ցույց են տալիս Հանձնաժողովի հետևողական և համակարգված մոտեցումը՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ իր գործառույթների արդիականացման և թափանցիկության բարձրացման ուղղությամբ: Հայտարարագրման էլեկտրոնային հարթակի կատարելագործումը, կուսակցությունների հաշվետվությունների ներկայացման նոր հարթակի ներդրումը, նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման մեկնարկը, պաշտոնական կայքէջի արդիականացումը և կրթական էլեկտրոնային հարթակի գործարկումը վկայում են Հանձնաժողովի թվային կարողությունների ընդլայնման և կանխարգելիչ մանդատի արդյունավետության և ազդեցության բարձրացման հանձնառության մասին:

10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, կարևորելով միջազգային համագործակցության դերը Հանձնաժողովի գործունեության և գործառույթների իրականացման հարցում, 2024 թվականի ընթացքում շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գործընկերների հետ՝ մասնակցելով վերջիններիս կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների, հյուրընկալելով միջազգային պատվիրակություններ Հանձնաժողովում և համատեղ ջանքերով կազմակերպելով մի շարք միջոցառումներ և վերապատրաստումներ:

Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների իրականացման, ինչպես նաև Հայաստանի պետական համակարգում բարեվարքության տարածման և կոռուպցիայի կանխարգելման նպատակով «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական հատվածում» ԵՄ Թվինինգ ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մեկնակրկել էր դեռևս 2022 թվականին, որի ամփոփումը կատարվել է 2024 թվականի առաջին կիսամյակում: Ծրագիրը բաղկացած է եղել 4 բաղադրիչներից, որոնցից երեքի շահառուն Հանձնաժողովն էր, մեկինը՝ Արդարադատության նախարարությունը:

Բաղադրիչ 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավում՝ Հայաստանում հակակոռուպցիոն (բարեվարքության) կրթական և հանրային իրազեկման ծրագրերի մշակման և դրանց իրականացմանն աջակցման ոլորտում:

Բաղադրիչ 2. Ռազմավարական հաղորդակցության և համագործակցության մեխանիզմների ներդրում և գործարկում:

Բաղադրիչ 3. Հակակոռուպցիան ռազմավարության իրականացման մակարդակի բարելավում՝ ՀՀ արդարադատության նախարարության մշտադիտարկման կարողությունների զարգացման միջոցով:

Բաղադրիչ 4. Բիզնես բարեվարքության բարելավում:

Ծրագրի շրջանակներում Հանձնաժողովն իրականացրել է հակակոռուպցիոն ոլորտում կրթական ծրագրեր և հանրային իրազեկման միջոցառումներ, ինչպես նաև պետական մասնակցությամբ երեք կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատում և մշակել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործառույթի իրականացման համար անհրաժեշտ անձնակազմի հաշվարկի մեթոդաբանություն ու վարչության պաշտոններին ներկայացվող որակավորման պահանջների և հմտությունների մշակում (Եմ փորձագետներ Պիտեր Վայսի և Սիլվիա Շպասի հետ համատեղ):

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են արտասահմանյան գործընկերների կողմից կազմակերպված ներքոնշյալ միջոցառումներին:

➤ *Եվրոպայի խորհրդի Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի և համագործակցության բաժնի կողմից Ստրասբուրգում կազմակերպված՝ «Արևելյան*

գործընկերության տարածաշրջանում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման գործիքները» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի կառավարման ոլորտում Հայաստանի արձանագրած առաջընթացը՝ անդրադառնալով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրմանն ուղղված գործողություններին և այդ ուղղությամբ Հանձնաժողովի իրականացրած աշխատանքներին, ինչպես նաև այն մարտահրավերներին, որոնց բախվում է Հանձնաժողովն այդ գործառնության արդյունավետ գործարկումն ապահովելու հարցում:

➤ *Համաշխարհային Բանկի Կառավարման գլոբալ ստորաբաժանման կողմից ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում կազմակերպված «Արդարադատություն և իրավունքի գերակայություն. Ներառական և կայուն զարգացման խթանում» խորագրով գլոբալ ֆորումին:* Ֆորումի ընթացքում քննարկվել են արդարադատության և իրավունքի գերակայության ոլորտում համատեղ գործողությունների ձևավորման և զարգացման ուղղություններն՝ ընդգծելով արդարադատության համակարգի՝ կայուն զարգացման գործընթացում ունեցած առանցքային դերը: Ներկայացվել է նաև ՀՀ փորձը ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում, վերաբերելի նախաձեռնություններն ու առկա խնդիրները:

➤ *Քաղաքական բարեվարքության 6-րդ ճամբարին՝ նվիրված քաղաքական կուսակցությունների արդյունավետ վերահսկողությանը:* Այն կազմակերպվել է Բեռլինում ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և Թրանսփարենսի ինթերնեշնլի (ԹԻ) կողմից: Թեմայի շրջանակներում Հանձնաժողովի անդամը ներկայացրել է տվյալ ուղղությամբ իրականացված բարեփոխումները, Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի արդյունքում կարգավորումներում հայտնաբերված բացերը, քաղաքական կուսակցությունների ֆինանսական վերահսկողության գործառնության իրականացման համար նախատեսվող նորարարական լուծումները:

➤ *Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ) Բիզնեսի բարեվարքության խմբի կողմից Փարիզում կազմակերպված «Բիզնես բարեվարքության խթանման և ապահովման գործում կառավարության դերը» խորագրով աշխատաժողովին:* Հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրել են բիզնեսի բարեվարքության խթանման գործում պետական մարմինների առանձնահատուկ դերը, պետական մասնակցությամբ ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտում Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքներն ու առաջիկա ծրագրերը: Ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետության 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունները:

Հատկանշական է նաև, որ Հանձնաժողովի անդամները Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցել են.

➤ Ստրասբուրգում կազմակերպված Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 96-րդ լիագումար նիստին, որի օրակարգում եղել են 5-րդ փուլի գնահատման զեկույցներ և 5-րդ և 4-րդ գնահատման փուլերին առնչվող համապատասխանության զեկույցներ՝ ընդհանուր 11 անդամ պետությունների վերաբերյալ: 5րդ փուլի շրջանակներում որպես առանձին ուղղություն գնահատվում են Կենտրոնական կառավարման մարմիններում կոռուպցիայի կանխարգելումը, վերաբերելի օրենսդրական դաշտը, պրակտիկայում դրա կիրառումը և ինստիտուցիոնալ համակարգը:

➤ Լիտվայում կայացած «Դիմակայել համաշխարհային մարտահրավերներին. Նպաստել բարեվարքության ամրապնդմանը» խորագրով 21-րդ միջազգային հակակոռուպցիոն համաժողովին (IACC/ՄՀԿԿ), որի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, որոնք վերաբերել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային տեխնոլոգիաներին, մասնավոր ոլորտում բարեվարքության ամրապնդմանը: Առանձին թեմատիկ միջոցառման ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից ներկայացվել է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում Հայաստանի փորձը, իրականացված քայլերը, ձեռքբերումները և մարտահրավերները:

Հանձնաժողովը, հաշվետու տարվա ընթացքում, նաև իր մասնակցությունն է ունեցել.

➤ *Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված «G20/ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքներ» խորագրով աշխատաժողովին*, որի ընթացքում անդրադարձ է կատարվել մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համատեքստում կորպորատիվ կառավարման կարևորությանը և այդ ուղղությամբ Հանձնաժողովի իրականացրած աշխատանքներին, ինչպես նաև ՏՀԶԿ-ի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի Հայաստանի գնահատման զեկույցին՝ շեշտադրելով ոլորտային բարեփոխումների անհրաժեշտության համատեքստում Հանձնաժողովի իրականացրած աշխատանքի, ինչպես նաև կորպորատիվ կառավարման սկզբունքների շուրջ նմանատիպ քննարկումների կարևորությունը:

➤ *«Բաց կառավարման Արևելյան գործընկերության համայնքային երկխոսության» միջոցառմանը*, որի ժամանակ ներկայացվել է Հանձնաժողովին վերապահված լիազորությունները, դրանց իրականացման ընթացքում Հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության համագործակցության հնարավորություններն ու դրանց կարևորությունը:

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովում են հյուրընկալվել միջազգային մի շարք գործընկերներ, մասնավորապես.

➤ *ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավար Էրին ՄըՔին*: Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ նախաձեռնած կրթական և հանրային իրազեկման ուղղությամբ ծրագրերի արդյունքները: Քննարկումները կենտրոնացած են եղել նաև դրանց շարունակական առաջընթացի ապահովման և համագործակցության հետագա ուղղությունների ուսումնասիրման վրա:

➤ *Համաշխարհային բանկի պատվիրակությունը՝ Բանկի՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գծով կառավարման հատվածի ղեկավար Ադրիան Ֆոգարդի գլխավորությամբ:* Հանդիպման ընթացքում քննարկվել են Հանձնաժողովի գործառույթներին առնչվող առաջնահերթություններն ու մարտահրավերները, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման ոլորտում բարեվարքության, թափանցիկության սկզբունքների ամրապնդման հարցերը: Կողմերն անդրադարձել են նաև հակակոռուպցիոն բարեփոխումներում թվայնացման դերին՝ ներկայացնելով Հանձնաժողովի տեսլականը թվային լուծումների կիրառման ուղղությամբ: Քննարկվել են նաև համագործակցության հեռանկարային հնարավորությունները:

➤ *«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ներկայացուցիչները՝ Վենետիկի հանձնաժողովի անդամներ Օլիվեր Կասկը (Էստոնիայի հարցով Վենետիկի հանձնաժողովի փոխարինող անդամ), Կատարինա Փաբելը (Ավստրիայի հարցով Վենետիկի հանձնաժողովի փոխարինող անդամ), Մայքլ Յանսենը (Վենետիկի հանձնաժողովի քարտուղարություն), Համաձիրիպի Մանիկվան (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների մասով խորհրդական):* Հանդիպման ընթացքում քննարկվել է ընտրական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխությունների նախագծի՝ Հանձնաժողովին վերաբերելի դրույթները, ինչպես նաև կուսակցությունների ֆինանսական հսկողության վերաբերյալ հարցեր:

➤ *Բաց կառավարման գործընկերության Արևելյան գործընկերության երկրների (ԲԿԳ ԱլԳ) տարածաշրջանային համակարգող Պիտեր Վարգան և Ծրագրի ներկայացուցիչ Պատրիսիա Պանչուկը:* Հանդիպմանը քննարկվել է համագործակցության շրջանակը և ԲԿԳ հանձնառությունները, որոնք իրականացվել են Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը ներկայացրել է գործունեության նոր արդյունքները, մասնավորապես՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգի նոր լուծումները, բարեվարքության ուսումնասիրության ինստիտուտի ներքո Հանձնաժողովին վերապահված նոր գործառույթները, կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի կիրարկման ընթացքը, հանրային ծառայության համակարգում բարեվարքության խթանմանն ուղղված քայլերը: Պիտեր Վարգայի կողմից առաջարկվել է Հանձնաժողովի՝ արդեն գրանցած արդյունքները միջազգային հարթակներում առաջադրել որպես «լավագույն փորձ» անվանակարգին հավակնող օրինակներ:

➤ *Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) պատվիրակության ներկայացուցիչները՝ ծրագրերի փոխնախագահ Կատերին Էլլենայի գլխավորությամբ:* Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել կողմերի համագործակցության շրջանակներում ինչպես ներկայումս իրականացվող, այնպես էլ նախատեսվող ծրագրերին: Քննարկվել են նաև Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող օրենսդրական և գործնական մի շարք խնդիրներ:

➤ *Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) և Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) համատեղ պատվիրակությունը,* որի շրջանակներում քննարկվել է

համագործակցության հնարավոր տարբերակներ՝ կապված հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում գործարար բարեվարքության ամրապնդմանն ուղղված գործողությունների ու դրանցից բխող օրենսդրական փոփոխությունների գործընթացի հետ:

➤ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և «Միլենիում Փարթներս Քոնսալթինգի» կողմից իրականացվող «Դիմակայող հաստատությունները ռազմավարական կոռուպցիայի դեմ» ծրագրի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչները: Ներկայացվել է Ծրագրի նպատակը, որը խթանելու է տարածաշրջանային համագործակցությունը, նպաստելու է պետական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, բարելավելու է ռիսկերի վերլուծության ու կարգավորման համակարգերը: Քննարկումը կենտրոնացված էր համագործակցության երկու՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության փոխանակման հարցում տարածաշրջանային համագործակցության և ոլորտային ռիսկերի կառավարման կարևորագույն ուղղությունների վրա:

➤ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության առաջին խորհրդական Քրիստոֆ Քացաիյանի ղեկավարած պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և Ֆրանսիայի միջև հակակոռուպցիոն համագործակցության հնարավոր ուղղությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ինստիտուցիոնալ փորձի փոխանակմանն ու համատեղ նախաձեռնությունների իրականացման հեռանկարներին: Քննարկվել է նաև Ֆրանսիայի հակակոռուպցիոն գործակալության ([AFA](#)) և Հանրային կյանքի թափանցիկության բարձր մարմնի ([HATVP](#)) գործունեությունը՝ որպես կիրառելի փորձ Հայաստանի հակակոռուպցիոն համակարգի զարգացման համատեքստում: Հանձնաժողովը ներկայացրել է իր գործառույթները, առաջնահերթությունները և թվայնացման միջոցով կանխարգելման մեխանիզմների կատարելագործման տեսլականը: Կողմերը կարևորել են երկկողմ համագործակցության շարունակականության և ընդլայնման անհրաժեշտությունը:

Հաշվետու տարվա ընթացքում, վերը նշված համագործակցություններից զատ, Հանձնաժողովը այլ հանդիպումներ է ունեցել մի շարք միջազգային գործընկերների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Միջազգային գործընկերների աջակցությամբ Հանձնաժողովը կազմակերպել է նաև մի շարք միջոցառումներ և վերապատրաստումներ.

➤ ԵՄ Թվինինգ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցների համար կազմակերպվել է «Ռազմավարական հաղորդակցություն» եռօրյա վերապատրաստում՝ ուղղված հաղորդակցության հմտությունների և կարողությունների զարգացմանը:

➤ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի գործընկերների աջակցությամբ կազմակերպվել է «Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ» խորագրով քառօրյա վերապատրաստման դասընթացը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակված հայտարարագրման գործընթացի խորհրդատուների համար: Վերապատրաստման

ընթացքում ներկայացվել է հայտարարագրման համակարգի նպատակը, հայտարարատուների շրջանակը, հայտարարագրերի տեսակներն ու դրանց ներկայացման ժամկետները, հայտարարագրման ենթակա տվյալները, հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացները, հայտարարագրերի համար կիրառվող պատասխանատվության միջոցները:

➤ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցների համար կազմակերպվել է «Կիրքերի զենա» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում բանախոսները ներկայացրել են կիրքերի արձակումների տարածված տեսակները, հիմնարար սկզբունքները, ընդհանուր մարտավարությունը, ֆիշինգի և թիրախային ֆիշինգի տարբերակումը, ինչպես նաև կանխարգելման մեխանիզմները:

➤ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը կազմակերպել է «Տվյալներն ընդդեմ կոռուպցիայի» հաքաթոնը, որի ընթացքում մասնակիցները առաջարկել են ռիսկերի ավտոմատացված գնահատմանը, տվյալների բազաների համադրմամբ կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերմանը և վիզուալիզացիայի և հաշվետվությունների առաջատար գործիքների մշակմանն ուղղված թվային լուծումներ:

➤ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ Հանձնաժողովը կազմակերպել է «Հանձնաժողովի կարողությունների հզորացում փաստերի ստուգման և տվյալների հետ աշխատանքի ուղղությամբ» կարողությունների զարգացման երկամսյա դասընթաց: Դասընթացն իրականացվել է Այ Էյ Բի բիզնեսի միջազգային Ակադեմիայի բանախոսների կողմից, ովքեր ներկայացրել են տվյալների բազաներին և դրանց հետ աշխատանքի առանձնահատկություններին, տվյալների հավաքագրման գործիքակազմին վերաբերելի թեմաներ:

➤ Կորպորատիվ կառավարման կենտրոնի, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի, ԱՄՆ առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությամբ առաջին անգամ կազմակերպվել է «Կորպորատիվ կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» [աշխատաժողովը](#), որը նպատակ ուներ ծառայելու որպես հարթակ, որի միջոցով մասնակիցները կձանոթանային կորպորատիվ կառավարման լավագույն պրակտիկաներին, կվերլուծեին ՀՀ պետական մասնակցությամբ ընկերությունների կորպորատիվ կառավարմանը վերաբերելի խնդիրները և մարտահրավերները, ինչը հնարավորություն կտա ընկերություններում ներդնել ժամանակակից տնտեսական մարտահրավերներին և հանրային սպասելիքներին համահունչ՝ ավելի կայուն, թափանցիկ և պատասխանատու կառավարման մոդելներ: Աշխատաժողովին մասնակցեն են ՀՀ պետական և համայնքային մասնակցությամբ


ընկերությունների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և փորձագիտական շրջանակի ներկայացուցիչներ:

➤ Հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ 2024 թվականի դեկտեմբերի 1-ից մեկնարկել է [«Կոռուպցիայի կանխարգելման ներածություն»](https://help.elearning.ext.coe.int/course/view.php?id=5574) խորագրով HELP առցանց դասընթացը: Դասընթացը մշակվել և հարմարեցվել է Ազգային ժողովի պատգամավորների, Քննչական և Հակակոռուպցիոն կոմիտեների քննիչների, դատավորների, դատախազների, համար: Մասնակցել են նաև Հանձնաժողովի անդամներ և Արդարադատության նախարարության ներկայացուցիչները: Եվրոպայի խորհրդի HELP առցանց հարթակի դասընթացը (դրա բովանդակությունը) մշակվել է՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկան և Հանձնաժողովի հաստատած՝ վերաբերելի փաստաթղթերը: Երկամսյա դասընթացի արդյունքում մասնակիցների 70 %-ը ապահովել է դրական արդյունք:

Դասընթացի հղումը՝ <https://help.elearning.ext.coe.int/course/view.php?id=5574>:



Introduction to Corruption Prevention (6 hours)



Armenian

Course format: SELF-LEARNING

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն ակտիվորեն զարգացրել է միջազգային համագործակցությունը՝ ամրապնդելով գործընկերային հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ: Հանդիպումները միջազգային գործընկերների հետ նպաստել են փորձի փոխանակմանը, նոր համագործակցության ուղղությունների ձևավորմանն ու գործող ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

11. ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հաղորդմամբ ներկայացված տվյալները հավաստում են 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների քանակական և որակական առաջընթացը: Հանձնաժողովի մի շարք լիազորություններ հաշվետու

Ժամանակահատվածում գործնականում կիրառվել են առաջին անգամ, իսկ որոշ դեպքերում՝ գործուն քայլեր են ձեռնարկել իրավակիրառ պրակտիկայի զարգացման ուղղությամբ, զգալիորեն կատարելագործվել է վերաբերելի օրենսդրական դաշտը: Միաժամանակ, դեռևս չհասցեագրված են մնում մի շարք մարտահրավերներ, որոնք, զգալիորեն խոչընդոտում են Հանձնաժողովի գործունեության արդյունավետությանը: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը, հաշվի առնելով անդամների թերհամալրվածությունը, բազմիցս բախվել է որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումի բացակայությանը:

Դեռևս շարունակում է բարձր մնալ աշխատակազմի կադրային հոսունությունը: Այսպես, չնայած հայտարարված տասնյակ մրցույթներին՝ Հանձնաժողովի մի շարք ղեկավար և մասնագիտական պաշտոններ կամ չեն համալրվում, կամ պաշտոնի պատասխանատվության շրջանակի և բարձր ռիսկայնության, միաժամանակ ոչ համարժեք վարձատրության պայմաններում պաշտոնի նշանակվելուց կարճ ժամանակ հետո աշխատակիցներն ազատվում են աշխատանքից:

Որպես առանձին մարտահրավեր անհրաժեշտ է ընդգծել նաև ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի շրջանակներում Հանձնաժողովի մանդատից բխող միջոցառումների իրականացման առնչությամբ ցուցաբերվող աջակցության կասեցումը, որի առկայությունը զգալիորեն մեղմում էր Հանձնաժողովում մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների հետ կապված խնդիրները, ինչպես նաև զգալի աջակցություն էր ցուցաբերում Հանձնաժողովի գործառույթների թվայնացման նախաձեռնությունների համատեքստում: